

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՅԱՆ ԿԱՐԵՆԻ

ՀԱՅԱՅ ԱՏԻԿԱՅԻՆ ՄՂԵՂԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԱՏԵՆԱԿՈՍՈՒԹՅՈՒՆ

Ե.20.01 «Գյ ու ղ ա տ ն տ Ե ս ա կ ան ար տ ա դ ր ու թ յ ան մ Ե ք Ե ն ա յ ա ց ու մ և
մ Ե ք Ե ն ան Ե ր » մ ա ս ն ա գ ի տ ու թ յ ամ ք տ Ե խ ն ի կ ա կ ան գ ի տ ու թ յ ու ն ն Ե ր ի
թ Ե կ ն ա ծ ու ի գ ի տ ա կ ան ա ս տ ի ճ ան ի հ ա յ ց մ ան հ ամ ար

ԳԻՏԱԿԱՆ ՂԵՎԱՎԱՐ՝

ՏԵԽ. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Դ.Պ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴՈՒԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
1. ՀԱՐՑԻ ԴՐՎԱԾՔԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	9
1.1. ՀԱՅԱՅ ԱՏԻԿԱՅԻՆ ՄՂԵՂԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԿԵՐ	9

1.2 3 ԱՅԱՅԱՏԻԿԱՅԻՆ ՄՂԵՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒ ՄԸ Լ ԻԱՌԱՅԻՈՆ ԿԵՐԱԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԻՍ	
12	
1.3. ԾՂՈՏԻ ԵՎ ՄՂԵՂԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒ ԾՈՒԹՅՈՒՆԸ	16
1.4. ՊԼԵՎՄԱՓՈՒԽԱԿՐԻՉՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒ ԾՈՒԹՅՈՒՆԸ	20
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	24
1.5. ԱԾԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	26
2. ՊԼԵՎՄԱՓՈՒԽԱԿՐԻՉԻ ՏԱՏԱՆԿՈՂ ԵԿԱԽՈՂՈՎԱԿՈՎ ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՆԵՐԾԾՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ	28
2.1. ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ	28
2.2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ ՀԱՎԱՔՈՂ ՊԼԵՎՄԱՓՈՒԽԱԿՐԻՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԱԾԽԱՏԱՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ	28
2.3. ՊԼԵՎՄԱՓՈՒԽԱԿՐԻՉԻ ԱԾԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ	30
2.4. ՊԼԵՎՄԱՓՈՒԽԱԿՐԻՉԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ	33
2.4.1. ՊԼԵՎՄԱՓՈՒԽԱԿՐԻՉԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ	33
2.4.2. ԸՆԾՄԱՆ ԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԾԱՅՐԱՓՈՂԱԿՈՒՄ 37	
2.4.3. ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՈՒ ՂՂԱՋԻԳ ՏԱՏԱՆԿՈՂ ԽՈՂՈՎԱԿՈՎ ՇԱՐԺՄԱՆ ՓՈՒԼԸ	39
2.4.4. ԸՆԾՄԱՆ ԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԵՐԾՇՈՂ ԽՈՂՈՎԱԿԻ ՈՒՂԻՂ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ	46
2.4.5. ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՇԱՐԺՈՒՄԸ ՆԵՐԾՇՈՂ ԽՈՂՈՎԱԿԻ ԿՈՐ ՏԵՂԱՄԱՍՈՎ	47
2.4.6. ԸՆԾՄԱՆ ԿՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԵՐԾՇՈՂ ԽՈՂՈՎԱԿԻ ԿՈՐ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ	53
2.4.7. ՆԵՐԾՇՈՂ ԵԿԱՓՈՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՈՒ ԿԻՆԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ	54
2.5. ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՊԼԵՎՄԱՓՈՒԽԱԿՐԻՉԱՅԻՆ ԱԳՐԵԳԱՏԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՌԵԼ ԻՔԻ ԾԱԽԱԸ	57
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	59
3.ԳԻՏԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ,	

ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ	61
3.1. ԳԻՏԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ	61
3.2. ԳԻՏԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ	62
3.3. ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ	62
3.3.1. ՄՂԵՂԱՅ ԱՎԱՔ ՊՆԵՎՄԱՓՈԽԱԿՐԻՉԻ Լ ԱԲՈՐԱՏՈՐ ՍԱՐՔԻ ԿԱՌՈՒ ՑԿԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒ ԹԱԳԻՐԸ	63
3.4. ՄՂԵՂԱԹՄԲԵՐԻ ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ, ՄՂԵՂԻ ԵԼՔԻ ԵՎ ԲԱՂԱԴՐՈՒ ԹՅԱՆ ՈՐՈՇՈՒ ՄԸ	64
3.4.1. ՄՂԵՂԱԹՄԲԻ ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՈՐՈՇՈՒ ՄԸ	65
3.4.2. ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒ ԲԴԻ ԲԱՂԱԴՐՈՒ ԹՅԱՆ ԵՎ ՄՂԵՂԻ ԵԼՔԻ ՈՐՈՇՈՒ ՄԸ 68	
3.5. ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒ ԲԴԻ ՖԻԶԻԿԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԿՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	70
3.5.1. ՄՂԵՂԱԹՄԲՈՒ Մ ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒ ԲԴԻ ԽՈՆԱԿՈՒ ԹՅԱՆ ՈՐՈՇՈՒ ՄԸ	70
3.5.2. ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒ ԲԴԻ ԾԱԿԱԼ ԱՅԻՆ ԽՏՈՒ ԹՅԱՆ ՈՐՈՇՈՒ ՄԸ	73
3.5.3. ԾՓՄԱՆ ԳՈՐԾԱԿՑԻ ՈՐՈՇՈՒ ՄԸ	75
3.5.4. ԳԻՏԱՓՈՐՁԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	76
3.6. ՕԴԱՅԻՆ ՀՈՍՔԻ ԸՆԾՄԱՆ ԿՈՐՈՒ ՍՏՆԵՐԻ ՈՐՈՇՈՒ ՄԸ ՆԵՐԾԾՈՂ ԸԿԱԽՈՂՈՎԱԿԻ ԾԱՅՐԱՓՈՂԱԿՈՒ Մ, ՈՒ ԴԻՂ ԵՎ ԿՈՐ ՏԵՂԱՄԱՍԵՐՈՒ Մ 80	
3.6.1. ԳԻՏԱՓՈՐՁԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ	81
3.6.2. ՆԵՐԾԾՈՂ ԽՈՂՈՎԱԿՈՒ Մ ՕԴԻ ՀՈՍՔԻ ՍՏԱՏԻԿ, ԴԻՆԱՄԻԿ ԵՎ ԼՐԻԿ ԸՆԾՈՒ ՄՆԵՐԻ ՈՐՈՇՈՒ ՄԸ	84
3.6.3. ՕԴԻ ԱՐԱԳՈՒ ԹՅԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒ ՄԸ ՆԵՐԾՄԱՆ ԸԿԱԽՈՂՈՎԱԿՈՒ Մ	88
3.6.4. ՊՆԵՎՄԱՓՈԽԱԿՐԻՉԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒ ԹՅԱՆ, ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿՑԻ ԵՎ ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒ ԲԴԻ ԽՈՆԱԿՈՒ ԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԱԽԱԾՈՒ ԹՅՈՒՆԸ	89
3.6.5. ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՅԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՈՐՈՇՈՒ ՄԸ ԵՎ ԸՆՏՐՈՒ ԹՅՈՒՆԸ 92	
ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ	94
4. ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒ ԲԴԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՊՆԵՎՄԱՓՈԽԱԿՐԻՉԱՅԻՆ ԱԳՐԵԳԱՏԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒ ԹՅՈՒՆԸ	95
4.1. ՊՆԵՎՄԱՓՈԽԱԿՐԻՉՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՆՄՈՒ ԾԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒ ԹԱԳԻՐԸ	95
4.2. ԴԱԾՏԵՐԻ ԲՆՈՒ ԹԱԳՐԵՐԸ, ՈՐՏԵՂ ԱՆՑԿԱՑՎԵԼ ԵՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒ ՄՆԵՐԸ	96

4.3. ՄԴԵՂԱՅԻՆ ՊՆԵՎՄԱՓՈՒԽԱԿՐԻՉԱՅԻՆ ԱԳՐԵԳԱՏԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	98
4.4. ՄԴԵՂԱՅԻՆ ԱԿԱԲ ՊՆԵՎՄԱՓՈՒԽԱԿՐԻՉԱՅԻՆ ԱԳՐԵԳԱՏԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼ ՈՒ ԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱԾԱՅԱԳՈՐԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ	
110	
4.4.1.ՄԴԵՂԱՅԻՆ ԱԿԱԲ ՊՆԵՎՄԱՓՈՒԽԱԿՐԻՉԱՅԻՆ ԱԳՐԵԳԱՏԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	111
4.4.2. ԱԳՐԵԳԱՏԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ.....	111
4.4.3. ՎԱՌԵԼ ԱՆՅՈՒԹԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԾԱԽԻ ՈՐՈՇՈՒՄԸ.....	112
4.4.4. ՄԴԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ ՅԱՎԱՔՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՅՈՂՈՎ ԱՐՏՈՏՎԵԼ ՈՒ ՎՏԱՆԳԸ.....	113
4.4.5. ՄԴԵՂԱՅԻՆ ԱԿԱԲ ԱԳՐԵԳԱՏԻ ԱԾԽԱՏԱՆՔԻ ՅՈՒՄԱՆ ԻՈՒԹՅՈՒՆԸ	
113	
4.5. ՄԴԵՂԱՅԻՆ ԱԿԱԲ ՊՆԵՎՄԱ ՓՈՒԽԱԿՐԻՉԱՅԻՆ ԱԳՐԵԳԱՏԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ.....	115
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	119
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	120
ՅԱՎԵԼ ՎԱԾ.....	123
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	126

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

Անասնապահու թյուրընթացի ճանապարհի ճանապարհորդության զյուրադատությունը անառաջատար ճյուղերից մեկն է: Նրա զարգացման, արդյունավետության ու համախառն արտադրանքի բարձրացման կարևորագույն պայմանը կերային բազայի ամրապնդումն է: Կերարտադրության ընդհանուր թուլացումը անասնապահության միջև կապի հիմնական օղակն է: Որակյալ կերերի արտադրությունը և ամուր կերային բազայի ստեղծումը բնորոշում է անասնապահության զարգացման աստիճանը, կենդանիների գլխաքանակի, նրանց մթերատվության մակարդակի ու որակի [1, 3, 10, 15, 55, 84, 91, 97]:

Կերային բազան ձևավորելիս, կարևոր է հաշվի առնել ոչ միայն նրա ընդհանուր ծավալը, որն անհրաժեշտ է կենդանիների գլխաքանակի պահպանման ու որոշակի քանակի անասնապահական

մթերքներ արտադրելու համար, այլև նրա հավասարակշռվածությամբ ըստ սննդարարության: Ապացուցված է, որ կենդանիների մթերատվության աստիճանը 50-80% պայմանավորված է կերերի որակով ու օրաբաժնի սննդարարության հավասարակշռվածությամբ: Օրաբաժնի հավասարակշռության ապահովումը հնարավորություն է տալիս 15-20% բարձրացնել կերի օգտագործման արդյունավետությունը [10, 58, 91]:

Առանձին կերի տոկոսային հարաբերությունները կերերի ընդհանուր քանակին, բնութագրում է կերային բազայի կառուցվածքն ու կենդանիների կերակրման որակը: Այսպես, թռչնաբուծությունում համակցված կերերի քանակությունը կազմում է 97%, խոզաբուծությունում ~ 87%: Խոշոր եղջերավոր կենդանիների համար համակցված կերերը կազմում են 25%, կանաչ կերը՝ 37%, կոպիտև հյութալի կերերը 38% [1, 10, 55, 58]:

Կոպիտև հյութալի կերերի անբավարար որակն ու քանակը պատճառ են դառնում համակցված կերերի գերածախսին [3, 10, 84, 91]:

Անասնապահության արդյունավետության բարձրացումը ներառում է համակցված կերերի ծախսի լավարկման հետմիասին, որակյալ կոպիտկերերի օգտագործման ծավալների մեծացում [3, 10, 64, 84]:

Զարգացած անասնապահությունն ունեցող երկրներում նկատվում է համակցված կերերի ծախսի կրճատում և դրանց փոխարինումը վերամշակված, որակյալ կոպիտ ու հյութալի կերերով:

Այսպիսով, յուրաքանչյուր անասնապահական տնտեսությունում պետք է խնդիր դրվի բարձրացնել կոպիտև հյութալի կերերի քանակն ու որակական կազմը և արդյունավետ դարձնել նրանցում պարունակվող սննդարար նյութերի օգտագործումը: Դրան կարող են նպաստել կերերի հավասարակշռված օգտագործումը, որը հնարավորություն է կընձեռի 15-25% կրճատել նրանց ծախսը^a բարձրացնելով օգտագործման արդյունավետությունը:

Մեր հանրապետությունում կոպիտ կերերի աղբյուր է հանդիսանում նաև հացաբույսերի ծղոտը և մղեղը: Մեկ հեկտարից

կարելի է հավաքել 0,5...0,6տ մղեղային խառնուրդ: Մղեղն իր մեջ պարունակում է նաև զանազան մոլախտների սերմեր, որոնք իրենց որակական հատկություններով ու սննդարարությամբ չեն զիջում համակցված կերերին [10, 84, 91]:

Մղեղը և նրանում պարունակվող մոլախտների սերմերը (մղեղային խառնուրդ), որի կերային արժեքը կազմում է 0,48...0,5 միավոր, իր մեջ պարունակում է ճարպեր, շաքար, սպիտակուց, ֆոսֆոր, կալցիում և միջանկյալ դիրք է գրավում կոպիտ և համակցված կերերի միջև [25, 56]:

Ծղոտի մղեղային խառնուրդների հավաքումն ու հեռացումը դաշտերից միաժամանակ լուծում է երկու կարևոր խնդիր.

- առաջինը՝ հավաքման արդյունքում ստացվում է զգալի քանակությամբ արժեքավոր կեր,

- երկրորդը՝ ոչ պակաս կարևոր, դաշտերը մաքրվում են մոլախտների սերմերից:

Գործող տեխնոլոգիաներով ծղոտի հավաքումից ու դաշտից հեռացումից հետո այնտեղ մնում է մղեղը և նրանում պարունակվող մոլախտների սերմերը (այսուհետ մղեղային խառնուրդ): Յետագայում քամին այն տարածում է ամբողջ դաշտով մեկ: Արդյունքում անասնապահությունը զրկվում է զգալի քանակությամբ որակյալ կերից, իսկ դաշտերը շարունակում են աղտոտվել մոլախտներով: Յետագայում, մոլախտների դեմ քիմիական պայքարը, պահանջում է բավականին ֆինանսական միջոցներ, աշխատանքային ծախսումներ և զգալիորեն վնաս պատճառում շրջակամիջավայրին:

Վերը շարադրվածից հետևում է, որ գյուղացիական և ֆերմերային տնտեսություններում կերի կայուն բազա ապահովելու գործում կարևոր դեր ունի մղեղային խառնուրդների հավաքումն ու կուտակումը: Արդյունաբերության կողմից թողարկվում են բազմաթիվ տեխնիկական միջոցներ, որոնք տարբեր տեխնոլոգիական սխեմաներով, հացահատիկային դաշտերից, հավաքում ու հեռացնում են ծղոտը: Սակայն նույնը չի կարելի ասել մղեղի վերաբերյալ, որի դաշտից հավաքման ու հեռացման համար արդյունավետ, պարզ կառուցվածքի տեխնիկական միջոցներ գոյություն չունեն:

Չնայած խնդրի արդիականությանն ու տնտեսական հիմնավորվածությանը, մղեղային խառնուրդների հավաքման տեխնոլոգիաների ու տեխնիկական միջոցների պարամետրերի հետազոտությունը և կառուցվածքային չափերի հիմնավորմանը նվիրված հետազոտական աշխատանքներ գիտական գրականության մեջ գրեթե բացակայում են, որոնք հնարավորություն են չեն տալիս կոնստրուկտորներին նախագծել արդյունավետ, բարձր շահագործական ցուցանիշներով մղեղային խառնուրդների հավաքման և տրանսպորտային միջոցին բարձր մեքենաներ:

Այսպիսով, մղեղային խառնուրդների հավաքման արդյունավետ տեխնոլոգիաների և անհրաժեշտ տեխնիկական միջոցի նախագծման հիմունքների մշակումը և դրանց կառուցվածքային պարամետրերի ու տեխնիկատնտեսական ցուցանիշների բարելավմանը ուղղված հետազոտական աշխատանքների իրականացումը, ինչպես նաև դրանց գիտական վերլուծությունն ու գործնականում օգտագործումն արդիական են:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅԱՆ ԿԱՌՈՒ ՑՎԱՆՔԸ ԵՎ ԾԱՎԱԼ Ը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս բաժիններից, ընդհանուր եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից 107 անվանումով և հավելվածից: Այն շարադրված է 134 էջի վրա, ընդգրկում է 39 նկար և 16 աղյուսակ:

Յեղիական կողմից ատենախոսական աշխատանքը կատարվել է 2013-2016թթ. Յայ աստանի ազգային ագրարային համալսարանում:

1. ՀԱՐՑԻ ԴՐՎԱԾՔԸ ԵՎ ՀԵՏԱՉՈՏՄԱՆ ԽԱԴԻՐՆԵՐԸ
1.1. ՀԱՏԱՅ ԱՏԻԿԱՅԻՆ ՄՂԵՂԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԿԵՐ

Կերային կայուն բազայի ստեղծումը անասնապահության զարգացման կարևորագույն պայմանն է: Կերային բազայի վիճակով ու զարգացման աստիճանով է որոշվում կենդանիների գլխաքանակը, նրանց որակական կազմը, մթերատվությանը և ստացվող արտադրանքի ինքնարժեքը:

Անասնապահության կայուն զարգացման համար անհրաժեշտ է, որ կերերի արտադրության տեմպերը գերազանցեն կենդանիների գլխաքանակի աճի տեմպերին: Կերային բազան ձևավորելիս անհրաժեշտ է, որպեսզի կերերի ընդհանուր քանակի ապահովման հետ, պահպանվի նրանց սննդարարության հավասարակշռվածությունը:

Կերային բազայում համակցված, հյուսիսի և կանաչ կերերի հետ մեկտեղ իրենց ուրույն տեղն ունեն կոպիտ կերերը՝ խոտը, ծղոտը, մղեղը և այլն:

Հիմնական կերերի ցածր որակի պատճառով, ստիպված կերային օրաբաժնի հավասարակշռման համար, մեծացնում են համակցված կերերի ծախսը: Մասնագիտական գրականության մեջ [3, 25, 58, 78] հաստատվել է, որ որակյալ հիմնական կերերի առկայության ժամանակ 1լիտր կաթի հաշվով ծախսվում է 275...305 գրամ համակցված կեր, իսկ ցածր որակի դեպքում՝ 365...410 գրամ:

Ներկայումս, զարգացած անասնապահությունն ունեցող միջառք երկրներում ծղոտի որակը և կերային արժեքը բարձրացնելու համար կիրառում են հիդրոջերմային և քիմիական մշակման զանազան տեխնոլոգիաներ:

Ծղոտի սննդարար հատկությունների բարձրացման համար կիրառում են հանգած կիր և կարբամիդ: Լայն կիրառություն է գտել ծղոտի ամիակով մշակումը, որի ժամանակ նրա սննդարարությունը ավելանում է գրեթե երկու անգամ [1, 84, 91 և այլն]:

Գրական հակիրճ ակնարկը ցույց է տալիս, որ գիտության կողմից մշակվել և գործնականում փորձարկվել են կոպիտ կերերի մշակման արդյունավետ տեխնոլոգիաներ, որոնք հնարավորություն են տալիս բարձր սննդարարությամբ, որակյալ կերեր ստանալ և ապահովել անասնապահության պահանջները այդ կերերի հանդեպ:

Մեր հանրապետության գյուղացիական և ֆերմերային տնտեսությունները կայուն, որակյալ կերային բազայով ապահովելն ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են ինչպես հողային ռեսուրսների պակասով, այնպես էլ բնակլիմայական ոչ բարենպաստ պայմաններով^a տեղումների բացակայություն, հաճախակի կարկտահարություն և այլն: Նշված պայմաններն իրենց ազդեցությունն են թողնում տեղական կերերի ինչպես քիմիական բաղադրության ու սննդային և արժեքության վրա, այնպես էլ վճռական դեր խաղում բերքատվության և վերջապես անասնապահության արդյունավետության վրա: Տնտեսությունների գերակշիռ մասը

չ են կարողանում կուտակել անհրաժեշտ քանակությամբ որակյալ կոպիտ կերեր և կենդանիներին պահում են կերերի զգալի պակասի պայմաններում:

Մեր հանրապետության ընդհանուր վարելահողերի 28-31%, մոտավորապես, 127,3 հազ. հա կազմում են կերային մշակաբույսերով զբաղեցված տարածքները, որտեղից ստացվում է մոտ 375 հազ. տխտ [107]:

Ծղոտի վերաբերյալ վիճակագրական տվյալներ չկան:

Փորձ ենք հաշվել ծղոտի և մղեղի քանակությունը հացահատիկի համախառն բերքի քանակից ելնելով: Հացահատիկային մշակաբույսերի ցանքը կազմում է մոտ 200 հազ. հա: Ըստ տարիների հացահատիկային մշակաբույսերի զբաղեցրած տարածքը և ստացված բերքի քանակը բերված են աղյուսակ 1.1-ում [107]:

Աղյուսակ 1.1

Հացահատիկի արտադրությունն ըստ տարիների

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2013
Ցանքատարածությունը, հազ.հա	175,5	172	170,8	158,8	160,8	167,4
Համախառն արտադրանքը, հազ.տ	254,2	225,7	198,1	183,5	201,4	246,5

Ըստ գոյություն ունեցող նորմատիվների ստացվող բերքի մեջ հատիկի, ծղոտի և մղեղի հարաբերակցությունը կազմում է՝ 1: (1,25...1,35), այսինքն՝ 1տ հատիկին համապատասխանում է 1,25...1,35տ ծղոտ և 0,18...0,25տ մղեղ: Այսպիսով՝ տարվա կտրվածքով հանրապետությունում ստացվում է մոտ 270...350 հազ. տ ծղոտ և մոտ 50...60 հազ. տ մղեղ:

Եթե ծողոտի, գրեթե, ամբողջ քանակությունը դաշտերից հավաքվում է և կուտակվում որպես անասնակեր, ապա նույնը չի կարելի ասել մղեղային խառնուրդների հավաքման վերաբերյալ: Անհրաժեշտ է նշել, որ մղեղային խառնուրդների, մասնակի կամ գերթե, ամբողջովին չօգտագործելը կապված է մղեղային

խառնուրդների հավաքման կատարյալ տեխնոլոգիաների և համապատասխան մեքենաների բացակայու թյամբ:

Մղեղը, որը կազմված է հատիկային թեփուկներից, ջարդված հատիկներից, բազմազան մոլախտերի սերմերից, հարուստ է սննդանյութերով և լավ է յուրացվում կենդանիների կողմից, եթե այն մանրացվում է կերաջարդիչով:

Ծղոտի բաղադրությունում պրոտեինը գրեթե երկու անգամ պակաս է: Ծղոտի և մղեղի քիմիական կազմը և սննդարարության ցուցանիշները բերված են աղյուսակ 1.2-ում [10, 84, 91]:

Աղյուսակ 1.2

Ծղոտի և մղեղի քիմիական կազմն ու սննդարարությունը, %

Անվանումը	Կերային միավոր	Չոր նյութեր	Օրգանական նյութեր	Պրոտեին, գ/կգ		Ջուր	Մոխիր	Կալցիում, գ/կգ	Ֆոսֆոր, գ/կգ
				Հում	Յուրացվող				
Ծղոտ									
Ցորենի	0,22	84,9	79,0	4,6	0,9	35,1	5,9	3,2	0,8
Վարսակի	0,31	70,5	65,5	4,4	1,2	34,3	5,0	2,1	1,1
Գարու	0,35	62,1	77,7	4,6	1,3	33,6	5,7	1,8	1,2
Մղեղ									
Ցորենի	0,42	84,0	72,0	9,8	2,9	22,5	12,0	4,5	0,9
Վարսակի	0,44	82,0	73,5	6,2	2,3	24,3	8,5	6,5	1,4
Գարու	0,32	82,7	75,9	5,9	1,6	28,9	6,8	5,3	1,6

Աղյուսակում բերված տվյալներից հետևում է, որ հանքային տարրերի (կալցիում, ֆոսֆոր), պրոտեինի պարունակությամբ մղեղային խառնուրդները մոտ երկու անգամ գերազանցում են ծղոտին:

Մղեղային խառնուրդի կերային արժեքը կազմում է 0,48...0,5 կերային միավոր և մոտ 1,5 անգամ գերազանցում է ծղոտին [1, 10, 64]:

Մղեղային խառնուրդը պարունակում է մեծ քանակությամբ պրոտեին, որը նպաստում է նրա լավ յուրացմանը կենդանիների կողմից [1, 3, 7, 10, 58]:

Այսպիսով, բերված տվյալների հիման վրա կարելի է հիմնավոր ասել, որ անասնապահության կերային բազայի համալրումը մղեղային խառնուրդներով հնարավորություն

կատեղծի զգալիորեն բարելավել կենդանիների պահանջմունքը կոպիտ և համակցված կերերի նկատմամբ, ինչպես նաև ավելացնել նրանց մթերատվությունը:

Ամփոփելով վերը շարադրվածը, նշենք, որ մղեղային խառնուրդները ծղոտի, խոտի հետ միասին կարելի է օգտագործել անասնապահության ուղևոր կայուն կերային բազայի ստեղծման համար: Այդ նպատակով անհրաժեշտ է ստեղծել տեխնիկական միջոցներ էժան և հուսալի եղանակով, հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի հետ միաժամանակ, ամբողջությամբ հավաքել և տեղափոխել բավականին արժեքավոր կեր հանդիսացող մղեղային խառնուրդները:

1.2 ՀԱՅԱՐԱՍԻԿԱՅԻՆ ՄՂԵՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԼԻԱՌԱՅԻՈՆ ԿԵՐԱԿԱՌՆՈՒՐԴՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԻՍ

Կերերի որակը էական ազդեցություն ունի ինչպես կենդանիների մթերատվության, այնպես էլ արտադրվող մթերքի ինքնարժեքի վրա:

Կենդանիների կերը պետք է լինի սննդարար, համեղ և հեշտությամբ յուրացվող, իրենց մեջ չպարունակեն օրգանիզմի համար վնասակար նյութեր: Կենդանիների օրգանիզմը մթերատվության վրա ծախսում է կերերի էներգիայի 20-25%-ը, ֆիզիոլոգիական պահանջների վրա 30-35%-ը, իսկ մնացածը չի մարսվում և արտաթորվում է [1, 3, 84]:

Հիմնական կերերի ցածրորակության պատճառով կենդանիների օրական կերաբաժինը ստիպված են բալանսավորել համակցված կերերի գերաժախի հաշվին: Այսպես, համակցված կերերի ծախսը 1լ արտադրված կաթի վրա, հիմնական կերերի լավ որակի դեպքում կազմում է 275-305գ, իսկ ցածր որակի դեպքում՝ 365-410գ, մոտ 30-33%-ավել [10, 40, 58]: Խնդիրը հիմնական կերերի քանակի ավելացումով լուծել հնարավոր չէ, որոհետև բարձր մթերատու կենդանիների օրգանիզմը ի վիճակի չէ մարսելու կերերի մեծաքանակ զանգվածը: Հետևաբար, բարձր մթերատվության կենդանիներին տրվող կերերի օրաբաժնի 1կգ-ը պետք է պարունակի հնարավորինս ավելի մեծ էներգիա:

Անասնապահության մթերատվության բարձրացման համար անհրաժեշտ է կատարելագործել կերերի վերամշակման գոյություն ունեցող տեխնոլոգիաները և առաջարկել նոր մեթոդներ: Ներկայումս լայն կիրառություն է գտնում կենդանիների լիառացիոն կերախառնուրդներով կերակրման տեխնոլոգիան: Դրանք շատ անհրաժեշտ են, հատկապես, բարձր մթերատվությամբ կենդանիների կերակրման համար:

Բարձր որակի և քանակի կաթ ստանալու համար շատ արդյունավետ է լիառացիոն կերախառնուրդները, որոնք պատրաստվում են ծավալային կերերի բազայի վրա և հարստացված են սպիտակուցավիտամինային հավելումներով ու միկրոտարրերով: Այդպիսի խառնուրդների հիմնական բաղադրամասերը կարող են հանդիսանալ սիլոսը, սենածը, խոտը, հացահատիկային մղեղը: Այդ խառնուրդները կարելի է պատրաստել անմիջապես կերակրելուց առաջ: Կերերի նախապատրաստման խնդիրն է բարձրացնել նրանց սննդարարությունն ու կենդանիների կողմից յուրացվելիության աստիճանը: Լիառացիոն կերախառնուրդները լուծում են այդ խնդիրը և հնարավորություն են տալիս ապահովել կերաբաժնում պարունակվող բոլոր կերատեսակների առավել մարսելիությունը և իրականացվում է սննդարար նյութերի փոխլրացման սկզբունքը:

Չարգացող անասնապահության պայմաններում կարևոր է ոչ միայն բավարարել կենդանիների պահանջը սննդարար կերերի հանդեպ, այլև ընտրել այդ կերերի միջև ճիշտ հարաբերակցություն: Մղեղը, որը պարունակում է հատիկային թեփուկեր, ջարդված հատիկներ, մոլախոտի սերմեր, հարուստ է սննդանյութերով և տարբեր կերերի հետ համամասնորեն խառնվելով վերածվում է բարձր որակի լիառացիոն կերախառնուրդի և լավ յուրացվում է կենդանիների կողմից:

Կովերի կերակրման համար, բոլորից հաճախ, օգտագործում են խոնավ և կիսախոնավ լիառացիոն կերախառնուրդներ, որոնց կազմում ընդգրկվում են 4 և ավել բաղադրամասեր (սիլոս, արմատապտուղներ, ծղոտ, խոտ, մղեղ և այլն) [40, 56, 91]:

Առաջավոր անասնապահական տնտեսությունների փորձը ցույց է տվել, որ կովերի կերակրումը լիառացիոն կերախառնուրդներով

հնարավորություն է ստեղծում հասնել ավելի բարձր արդյունքների, որովհետև կերաբաժնի կազմում մտնող բոլոր կերերը խառնվելով իրար, իրենց բաղադրություններով լրացնելով միմյանց դառնում են ավելի դյուրամարս և հեշտ յուրացվող:

Կովերի լիառացիոն կերախառնուրդներով կերակրման հարուստ փորձ ունի Սպիտակի “Ագրոհոլդինգ” ՍՊԸ-ն: Տարիներ շարունակ տնտեսությունում հացահատիկային ծղոտի հետ հավաքում և պահեստավորում են նաև մղեղը, որի կերային արժեքը գրեթե երկու անգամ գերազանցում է ծղոտին: Մղեղի ծավալային խտությունը բավականին մեծ է, որի շնորհիվ թեթևանում է նրա հավաքումը և տեղափոխումը անասնապահական \$երմա: Պահեստավորելիս պահանջում է փոքր տարածք: Մղեղը օգտագործում են որպես կոպիտ կեր խառնելով բարձր խոնավությամբ և սպիտակուցներով հարուստ կերերի հետ: Կերակրումը լիառացիոն բալանավորված կերախառնուրդներով շատ կարևոր է հատկապես բարձր գենետիկական պոտենցիալով օժտված կովերի համար: Սպիտակի “Ագրոհոլդինգում” խնամվող կովերը օրեկան 30-35լ կաթ են տալիս և նրանք շատ զգայուն են կերախառնուրդի դիսբալանսին, քանի-որ նրանց մոտ շատ բարձր է նյութափոխանակության մակարդակը: Կերախառնուրդի դիսբալանսը բացի կաթնատվության անկումից բերում է նրանց վերարտադրության խաթարմանը: Այդ նպատակով շատ կարևոր է խիստ վերահսկողության սահմանումը բալանավորված կերախառնուրդների պատրաստման տեխնոլոգիական գործընթացին:

“Ագրոհոլդինգում” կիրառվում է “Dinamica Generale” տեխնոլոգիան, որի էությունը կայանում է նրանում, որ կերախառնիչի մեջ լցվում և խառնվում են լիառացիոն կերախառնուրդի բոլոր բաղադրիչներն այն քանակներով, որոնք հաշվարկել է անասնաբույժը (գոոտեխնիկը): Անասնաբույժի կողմից կերերի տեսակը և քանակը հաշվարկվում է ելնելով կենդանիների սննդանյութերի նկատմամբ պահանջից: Աշխատող օպերատորների կողմից կերախառնիչ բեռնվող կերատեսակները և նրանց քանակը գրանցվում է համակարգչի հիշողություն և անհրաժեշտության դեպքում կարող է ստուգվել:

Անասնաբույժի կողմից տրված առաջադրանքը ստանում է մեխանիզատոր-օպերատորը: Նա կերախառնիչ-բաշխիչի համակարգիչ մուտքագրում է համապատասխան տվյալները, որոնց հիման վրա պետք է պատրաստվի Լիառացիոն կերախառնուրդը: Ավտոմատ համակարգը որոշում է, թե որ բաղադրամասից որքան պետք է բեռնել խառնիչ: Վերջին բաղադրամասի բեռնելուց հետո համակարգիչը միացնում է խառնիչի ժամացույցը: Կերախառնիչ-բաշխիչում միաժամանակ ընթանում է երկու գործողություն՝ բաղադրամասերի մանրացում մինչև պահանջված չափերի և բոլոր բաղադրամասերի խառնումը իրար հետ՝ մինչև որոշակի համասեռության հասնելը: Գործնականում ապացուցվել է, որ կերախառնիչ-բաշխիչով կերախառնուրդի պատրաստման գործընթացը ավարտելու համար բավարար է 5-7 րոպե: Խառնման գործընթացի ավարտից հետո կերախառնիչ-բաշխիչը փոխադրվում է կովանոց և կերը բաշխում կենդանիներին:

Օգտագործելով կերերի Լիառացիոն խառնուրդի պատրաստման ավտոմատացված համակարգը հնարավորություն է ստեղծվում զգալիորեն կրճատել նյութական ծախսերը կերերի վրա և բարձրացնել կովերի մթերատվությունը: Այսպես, 50%-ով փոխարինելով համակցված կերերը մղեղային խառնուրդով «Ագրոհոլդինգ» տնտեսությունը օրական տնտեսում է մոտ 1,5-2 կգ համակցված կեր մեկ կովի հաշվով՝ պահպանելով կովերի մթերատվությունը ամբողջությամբ:

«Ագրոհոլդինգ» ՍՊԸ-ն օգտագործում է իռլանդական «Hi spac» Ֆիրմայի «Miks Maks» կերախառնիչ-բաշխիչ: Անասնապահության մեջ օգտագործվող կերերը իրարից խիստ տարբերվում են իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով, որը դժվարացնում է դրանց բնական տեսքով առանձին-առանձին մեքենայական բաշխման գործընթացը: Լիառացիոն կերախառնուրդի պատրաստումը և օգտագործումը հնարավորություն է տալիս ունիֆիկացնել կերաբաշխման տեխնիկական միջոցները:

Այս համակարգի ներդրումով հնարավորություն է ստեղծվում.

- համեմատաբար էժան կերատեսակներից ձևավորել Լիարժեք բալանավորված կեր,


- կերպաբաշխման համար, անկախ կերպաուսակի ֆիզիկամեխանիկական հատկություններից, օգտագործել մեկ տեսակի մեքենա,
- վերահսկել կովերի կերկրման և մթերավորության գործընթացը:

1.3. ԾՂՈՏԻ ԵՎ ՄՂԵՂԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈՒ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼ ՈՒ ԾՈՒԹՅՈՒՆԸ

Ծղոտի հետագա օգտագործման նպատակից կախված կիրառում են նրահավաքման տարբեր տեխնոլոգիաներ և մեքենաների համակարգ:

Ռուսաստանի դաշնությունում ծղոտը և մղեղը, որպես կոպիտ կեր, կենդանիներին կերակրելու համար օգտագործում են շատ սահմանափակ [1, 12, 15, 84, 91]: Ելնելով դրանից այնտեղ առաջարկվում է կիրառել ծղոտի և մղեղի հավաքման հետևյալ տեխնոլոգիական սխեմաները [55, 89]:

Միայն ծղոտը կամ ծղոտը մղեղի հետ միասին հավաքել և օգտագործել ամբողջական կամ մանրացված վիճակում: Այդ նպատակով կոմբայնից հեռացնել ծղոտակուտակիչը և տեղակայել ПУН-5 (ПУН-6) ու նիվերսալ ծղոտամանրիչը՝ ինչպես ցույց է տրված նկ.1.1 – ում:



Նկ.1.1 ПУН-5 ծղոտամանրիչ

հարմարանքի տեղակայման և աշխատանքի տեխնոլոգիական սխեման ա...գ տարբերակներ, 1-ծղոտամանրիչ թմբուկ, 2- մանրացված գանգվածի օդատար, 3- շնեկ, 4- թեքադիր տախտակ, 5- ծորակազմիչ, 6-

կցանք, 7- ծղոտացրիչ, 8- մղեղի օդատար, 9- մղեղի և մանրացված ծղոտի ցրիչ, 10- վահանակ:

Հարմարանքը (նկ.1.1) ունի ծղոտամանրիչ ապարատ 1, ընդլայնակամարձակավոր շնեկ 3, օդափոխիչ, թեքադիր տախտակ 4, մանրացված ծղոտի օդատար 2, ծղոտացրիչներ 7 և 9, լասավորիչ հարմարանք 5 և մղեղի օդատար 8:

Ծղոտամանրիչ ապարատը կազմված է թմբուկից և հակակտրիչ դանակներից: Մանրացված զանգվածի փոխակրիչ հարմարանքը բաղկացած է շնեկից և օդափոխիչից:

Հարմարանքը աշխատում է հետևյալ կերպ. ծղոտը և մնացած զանգվածը կոմբայնի ծղոտահարից մատուցվում է ծղոտամանրիչ թմբուկին, որտեղ այն մատուցվում է շնեկին:

ՄԿԿ-5 հարմարանքը հնարավորություն է տալիս ծղոտը և մղեղը հավաքել հետևյալ տեխնոլոգիական սխեմաներով.

- ծղոտի մանրացում և մղեղի հետ միասին լցնում կոմբայնին կցված կցասայլակում (նկ.1.1 ա),
- մանրացված կամ ամբողջական ծղոտի լասավորում և մղեղի հավաքում կցասայլակում (նկ.1.1 բ),
- մանրացված ծղոտի ցրում դաշտում և մղեղի հավաքում կցասայլակում (նկ.1.1 գ),
- մղեղի և ծղոտի լասավորում դաշտում (նկ.1.1 դ),
- ծղոտի և մղեղի ցրում դաշտում (նկ.1.1 ե),
- մղեղի և մանրացված ծղոտի մի մասի հավաքումը կցասայլակում, իսկ ծղոտի ցրումը դաշտում (նկ.1.1 զ):

Նկարագրված տեխնոլոգիաները, նույնիսկ, Ռուսաստանի դաշնությունում և նախկին ԽՍՀՄ – ում կիրառությունն չգտան հետևյալ թերությունների պատճառով.

- պահանջվում էր մեծ քանակով 9...14կՆ դասի անվավոր տրակտորներ ու բարձր կողապատերով կցասայլակներ,
- հացահատիկահավաք կոմբայնի արտադրողականությունը նվազում է 17...20 %, մեծանում վառելանյութի ծախսը,
- ՄԿԿ-5 ունիվերսալ հարմարանքի անհրաժեշտ քանակի բացակայությունով:

Ծղոտի ու մղեղի հավաքման և դաշտից հեռացման ռացիոնալ տեխնոլոգիաները ներդրում են հարցով գիտահետազոտական աշխատանքներ են կատարել Օ.Ե.Ավրոզը [1], Ե.Ի.Վասենովսկին [12], Վ.Ի.Վինոգրադովը [15], Ժ.Մ.Դագուբանը [24], Ա.Ճ.Դժամբուրշինը [25], Է.Վ.ժալնինը [32], Վ.Ա.Ռադիոնովը [74], Մ.Ի.Ռազդոբրենը [76], Ա.Ի.Ռուսանովը [78] և ուրիշներ:

Հետազոտությունների արդյունքում առաջարկված ծղոտի և մղեղի հավաքման-հեռացման տեխնոլոգիական և ծումները ունեն միջարթ թերություններ՝ հրդեհավտանգություն, կոմբայնի վրա մղեղի հսկաբունկերի տեղակայման անհրաժեշտություն, մղեղի դատարկումը դաշտի եզրին, հետագայում տրանսպորտային միջոցին բարձրագույն դժվարություններով և լրացուցիչ տրանսպորտային միջոցի ու բարձիջ մեքենայի անհրաժեշտություն:

Արտասահմանյան գրեթե բոլոր ֆիրմաների՝ ամերիկյան John Deere, լեհական Bizon, անգլիական Shilbome Reynolds Congtneering և այլ ֆիրմաների կողմից թողարկվող հացահատիկային կոմբայնների կառուցվածքում ընդհանրապես բացակայում է ծղոտակուտակիչը: Ծղոտը մանրացվում է ծղոտամանրիչով և մղեղի հետ շաղ տրվում դաշտի մակերևույթին: Վարի ժամանակ այն շուրջ է տրվում հողի տակ, որտեղ փտելով դառնում է օրգանական պարարտանյութ:

Բոլորովին այլ է հարցի դրվածքը մեր հանրապետությունում, որտեղ ֆերմերային և գյուղացիական տնտեսություններում կերային բազան համալրվում է, հիմնականում, կոպիտ կերերով և կենդանիների օրական կերային ռացիոնի հիմնական մասնաբաժինը կազմում են կոպիտ կերերը՝ խոտը և ծղոտը:

Ներկայումս ծղոտի հավաքումը կատարվում է հետևյալ տեխնոլոգիայով: Հացահատիկահավաք կոմբայնը համալրվում է ծղոտակուտակիչով և բերքահավքի ժամանակ ծղոտը և մղեղը հավաքում են ծղոտակուտակիչում: Ծղոտակուտակիչի լցվելուց հետո ծղոտը և մղեղը դատարկվում են դաշտում առաջացնելով ծղոտի բարդոցներ: Հետագայում տրանսպորտային միջոցը մտնում է դաշտ և բանվորները եղանով բարդոցի ծղոտը բարձրում են դաշտում թողնելով գրեթե ամբողջ մղեղը: Մեր հաշվարկներով դաշտում մնացող մղեղի քանակությունը հանրապետության

մասշտաբով կազմում է մոտ 50...60 հազ տոննա: Չգալի քանակությամբ մղեղի կորուստը բացասաբար է անդրադառնում կերային բազայի ձևավորման վրա, միաժամանակ պատճառ դառնում դաշտերի մոլ ավտտերով վարակվելուն:

Նման վիճակը բացատրվում է գիտականորեն հիմնավորված, արդյունավետ տեխնոլոգիաների և համապատասխան տեխնիկական միջոցների բացակայությամբ, որոնք հնարավորություն կտային մեր հանրապետության բնակչի մայական ու \$երմերային ու գյուղացիական տնտեսությունների մասնատված փոքր հողակտորների պայմաններում դաշտից հավաքել և տրանսպորտային միջոցին բարձել մղեղը և նրանում պարունակվող մոլ ավտտերի սերմերը և հնարավորինս ամրապնդել առանց այն էլ աղքատիկ կերային բազան:

Ամփոփելով հացահատիկային ծղոտի և մղեղային խառնուրդների հավաքման և դաշտից հեռացման միջև այժմ կատարված գիտահետազոտական և գիտափորձնական աշխատանքները կարելի է նշել, որ ծղոտի, հետագա օգտագործման, նպատակներով պայմանավորված, հավաքման և դաշտից հեռացմանը նվիրված գիտական աշխատանքներում գրեթե սպառիչ պատասխան է տրված բոլոր արոբլեմային հարցերին, ինչը չի կարելի ասել մղեղային խառնուրդների հավաքմանը և դաշտից հեռացմանը: Գրականությունում առկա, համեմատաբար փոքրաթիվ հետազոտությունները վերաբերում են բարդ, մետաղատար սարքավորումներին, որոնք տեղակայվում են կոմբայնի վրա՝ նվազեցնելով նրա արտադրողականությունը 17-20 %-ով, մեծացնելով վառելանյութի ու շահագործական ծախսերը [1, 15, 20, 21, 24, 25, 28, 31, 32, 66, 70, 74, 78, 86, 92 և այլն]:

Ուստի \$երմերային ու գյուղացիական տնտեսությունների հացահատիկային դաշտերից մղեղային խառնուրդների հավաքումը կազմակերպելու համար հրատապ խնդիր է ստեղծել նոր, փոքրաչափ, ոչ մետաղատար, էներգախնայող պարզ կառուցվածքի մեքենա, որը հնարավորություն կտա լուծել առկա խնդիրը և անասնապահությանը ապահովել լրացուցիչ 50...60 հազ. տոննա արժեքավոր կերով, ամրապնդել կերային բազան և բարձրացնել կենդանիների մթերատվությունը:

Մեր կողմից առաջարկվել է ծղոտի ու մղեղի հավաքման նոր տեխնոլոգիա ու տեխնոլոգիական սարքավորում, որը հնարավորություն է տալիս դաշտից հավաքել ու տեղափոխել մղեղը և նրանում պարունակվող մոլ փոստերի սերմերը:

Առաջարկվել է մանրացված ծղոտի, մղեղի ու նրանում պարունակվող մոլ փոստերի սերմերը հավաքող ու տրանսպորտային միջոցին բարձր, պարզագույն կառուցվածքի, ոչ մետաղատար պլաստիկից, որի համար ստացվել է գյուտի արտոնագիր [69]:

Նոր պլաստիկիցի մշակման և նախագծման ժամանակ մեր առջև խնդիր է դրվել ապահովել .

- կառուցվածքի պարզություն, արհեստանոցային պայմաններում պատրաստել ու հնարավորություն,
- մղեղային խառնուրդի հավաքման արդյունավետություն, աշխատանքի հոսսալիություն ու շահագործման պարզություն,
- փոքր եզրաչափեր և բարձր մանրողականություն:

1.4. ՊԼԵՎՍԱՓՈՒԱԿՐԻՉՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՅԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին պլաստիկիցները ի հայտ են եկել դեռևս 18-րդ դարում և օգտագործվում էին նաև բրդե հացահատիկով բեռնելու և բեռնաթափելու համար [98, 99, 100]: Յետագայում պլաստիկիցները լայն տարածում գտավ փայտամշակման, սննդարդյունաբերության, գյուղատնտեսության և այլ բնագավառներում [11, 18, 19, 26, 27, 29, 33, 36, 37, 38, 57 և այլն]:

Պլաստիկիցի աշխատանքի սկզբունքը հիմնված է ներծծող խողովակաշարի սկզբնամասի և մղող խողովակաշարի վերջնամասի միջև ստեղծված օդի ճնշումների տարբերությունով պայմանավորված, մեծ արագությամբ օդի հոսքով, այլ նյութի փոխադրելու հնարավորությամբ:

Յացահատիկի վերամշակման ձեռնարկություններում, ավրաղացներում օգտագործվող պլաստիկիցների տեխնոլոգիական գործընթացների հետազոտությանը նվիրված են բազմաթիվ աշխատանքներ: Դրանցով զբաղվել են Ֆ.Գ.Չուկը [36, 37,

38, 39], Գ.Ե.Բիկովը [8], Մ.Ռ.Վեյսմանը [11], Գ.Պ.Վելչովը [14], Ա.Ա.Վորոբյովը [16], Ա.Մ.Դոյադովը [26] և շատ ուրիշներ: Նշված աշխատություններում գիտական վերլուծության են ենթարկվել և հիմնավորվել պնևմատաքավորումների ընդունիչ-սնուցիչ սարքերի, խողովակաշարերի, բունկերների, ցիկլոնների (փոշեգատիչ), օդափոխիչների կառուցվածքային և տեխնոլոգիական պարամետրերը:

Նյութատար խողովակներում ճնշման կորուստների որոշման համար առաջարկվել են տարբեր բանաձևեր, որոնց կիրառման ժամանակ ստացվող արդյունքներ խիստ տարբերվում են իրարից:

Հակիրճ անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Հետազոտողներ Ն.Պ.Վոլոդինը [17], Մ.Ռ.Վայսմանը [11], Յ.Փեթերսոնը [100], ուսումնասիրելով երկբաղադրիչ հոսքի շարժումը ուղղաձիգ խողովակաշարով հանգում են այն եզրակացության, որ օդային հոսքում մասնիկների շփումից առաջացող ճնշման կորուստները ուղիղ համեմատական են միջին արագությանը և հակադարձ համեմատական խողովակի տրամագծին:

$$\Delta P_{շփ} = \Delta P_{շփ} \left(U \frac{L}{D} \right) \quad (1.1)$$

որտեղ՝ U -ն օդային հոսքում մասնիկների շարժման միջին արագությունն է, L -ը խողովակի երկարությունը, D -ն տրամագիծը:

Մ.Պ.Կալինուշկինը [46,47], Ի.Մ.Ռազումովը [75], նշում են, որ օդատարի պատերին նյութի շփումից առաջացող ճնշման կորուստներն աննշան են և հակառակը, Վ.Քարտը, Է.Գ.Կարնիշչան [45] և ուրիշներ հաստատում են, որ ճնշման կորուստները նյութի շփումից կազմում են ընդհանուր կորուստների զգալի մասը:

Տ.Գ.Չուևը [36, 37, 39] հետազոտելով ընդունիչ-սնուցիչ սարքը, հանգում է այն եզրակացության, որ օդի ճնշման կորուստների զգալի մասը ծախսվում է փոխադրվող նյութի մասնիկների արագացման վրա և որոշվում է հետևյալ արտահայտությամբ.

$$\Delta P = \beta \mu \frac{\rho \cdot V_{\text{օդ}}^2}{2g}, \quad (1.2)$$

որտեղ $a = 2 \frac{V_{\Delta}}{V_{0\eta}}$, փորձնական գործակից է և որոշվում է հատիկի օդում ազատ ճախրելու արագության V_{Δ} և օդի արագության $V_{0\eta}$ հարաբերությամբ, μ -ն խառնուրդի կոնցենտրացիայի գործակիցն է, ρ -ն՝ օդի խտությունը: Նման եզրակացության են հանգել նաև այլ հետազոտողներ [6, 14, 17, 18, 27, 29, 34, 35, 40, 53 և այլն]: Յետազոտողներ Մ.Ե.Դոգիևը և Ի.Ա.Կարպովը [44] առաջարկում են սնուցիչ սարքում ճնշման կորուստների որոշման հետևյալ բանաձևը.

$$\Delta P = \lambda_p \frac{\ell_p \rho V^2}{D} \quad (1.3)$$

որտեղ՝ λ_p -ն սնուցիչ տեղամասում հիդրավլիկական շփման գործակիցն է, ℓ_p - ն՝ սնուցիչ մասի երկարությունը, D - ն խողովակի տրամագիծը, ρ - ն՝ օդի խտությունը, V -ն օդի արագությունը:

Սակայն (1.3) բանաձևով ճնշման կորուստների հաշվարկը շատ դժվար է, որովհետև տեղամասում հիդրավլիկական շփման գործակցի λ_p -ի մեծության որոշումը կախված է մեծ բարդությունների հետ:

Պնևմատիկայի ներքին աշխատանքի բնորոշիչ պարամետրերից է նաև օդի արագության մեծության ճիշտընտրությունը:

Յետազոտելով մասնիկների կրիտիկական արագությունը Գ.Ֆ.Կոստյուկովը [51], Բ.Գ.Տուրբինը [93, 94] և այլ հեղինակներ [48, 77, 103, 105, 106] հիմնավորել են, որ պնևմատիկայի նորմալ աշխատանքի համար անհրաժեշտ է ներծծող խողովակաշարում օդային հոսքի բանվորական արագությունը կախված կոնցենտրացիայի գործակցից, որոշել հետևյալ արտահայտությամբ.

$$U_p = (1,25 \dots 3) U_{\eta p} \quad (1.4)$$

որտեղ՝ $U_{\eta p}$ -ը փոխադրվող նյութի մասնիկների ճախրելու կրիտիկական արագությունն է:

Ուսումնասիրելով մասնիկների շարժումը օդային հոսքում, մի խումբ հետազոտողներ [54, 57, 65, 71, 72, 75 և այլն], առաջարկել են գնդաձև հատիկի համար օդում ճախրելու արագությունը որոշելու բանաձև

$$U_{\alpha} = \sqrt{\frac{4gd\rho_{\alpha}}{3C_q\rho}}, \quad (1.5)$$

որտեղ՝ g -ն ազատ անկման արագացումն է, d - ն՝ մասնիկի տրամագիծը, ρ_{α} - ն՝ մասնիկի նյութի խտությունը, C_q - ն մասնիկի անթողինամիկական գործակիցը, ρ - ն օդի խտությունը:

Մասնագիտական գրականության հակիրճ վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հարուստ է գիտահետազոտական աշխատանքներով, որոնք նվիրված են փայտամշակման, սննդարդյունաբերության, հացահատիկի վերամշակման և այլ բնագավառներում օգտագործվող պնևմատիկալիչների աշխատանքին:

Ինչպես արդեն նշվել է, Ռուսաստանի Դաշնությունում ծղոտը և մղեղը որպես կոախտկեր, կենդանիներին կերակրելու համար, գրեթե չի օգտագործվում: Այդ պատճառով գիտահետազոտական և գիտափորձնական աշխատանքներ, նվիրված ծղոտի և մղեղի հավաքման ու տրանսպորտային միջոցին բարձրման աշխատանքների մեքենայացմանը, գրականությունում շատ քիչ են:

Առկա են աշխատանքներ նվիրված սոյայի ծղոտի (մղեղի) հավաքման աշխատանքներին: Այդ հարցերին անդրադարձել են Ա.Վ.Մորոնեցը [64], Տ.Ա.Մալիշևսկին [56]: Նրանց կողմից հիմնավորվել է սոյայի մղեղի, որպես անասնակեր օգտագործելու արդյունավետությունը: Մալիշևսկին առաջարկել է պնևմատիկալիչ սոյայի մղեղի հավաքման համար: Կատարվել են հետազոտական աշխատանքներ և ուսումնասիրվել են սոյայի մղեղի \$ֆիզիկամեխանիկական, անթողինամիկական հատկությունները [76]: Հետազոտական աշխատանքներ են կատարվել և որոշվել են մղեղի շարժման արագությունը ներծծող խողովակաշարում, հիմնավորվել է խողովակաշարի տրամագիծը: Ամփոփելով կատարված գիտահետազոտական և գիտափորձնական աշխատանքների գրական ակնարկը պետք է նշել, որ նրանք հիմնականում նվիրված են գյուղատնտեսական սորուն նյութերին (ցորեն, գարի, ոլոռ և այլն), որոնք իրենց \$ֆիզիկամեխանիկական և տեխնոլոգիական հատկություններով էականորեն տարբերվում են հետազոտության առարկա հանդիսացող մղեղի և նրանում գտնվող մոլախտերի սերմերի հատկություններից:

Քանի որ, փոխադրվող նյութի ֆիզիկամեխանիկական ու տեխնոլոգիական հատկությունները վճռորոշ նշանակություն ունեն այնև՛ս փոխակրիչների հիմնական հանգույցների կառուցվածքային պարամետրերի ընտրման ու հիմնավորման վրա, ապա գիտական գրականությունում առկա հետազոտական աշխատանքների արդյունքները մղեղային խառնուրդների այնև՛ս փոխակրիչի համար հիմնականում կիրառելի չեն, իսկ որոշ դրույթներ կարելի է կիրառել որոշակի վերապահումներով:

Չե տևաբար մանրացված ծղոտ ու մղեղային խառնուրդները հավաքող և տրանսպորտային միջոցին բարձրո՞ղ այնև՛ս փոխակրիչի կառուցվածքի մշակման ու պարամետրերի հիմնավորմանը ուղղված գիտահետազոտական աշխատանքները և դրանց վերլուծությունների արդյունքների գործնական կիրառության խնդիրներն արդիական են ու շատ անհրաժեշտ:

Ամփոփելով կատարված գիտահետազոտական և գիտափորձնական աշխատանքների գրական ակնարկը պետք է նշել, որ նրանք հիմնականում նվիրված են գյուղատնտեսական սորուն նյութերին (ցորեն, գարի, ոլոռ և այլն), որոնք իրենց ֆիզիկամեխանիկական և տեխնոլոգիական հատկություններով էականորեն տարբերվում են հետազոտության առարկա հանդիսացող մղեղի և նրանում գտնվող մոլախտերի սերմերի հատկություններից:

Քանի որ, փոխադրվող նյութի ֆիզիկամեխանիկական ու տեխնոլոգիական հատկությունները վճռորոշ նշանակություն ունեն այնև՛ս փոխակերպիչների հիմնական հանգույցների կառուցվածքային պարամետրերի ընտրման ու հիմնավորման վրա, ապա գիտական գրականությունում առկա հետազոտական աշխատանքների արդյունքները մղեղային խառնուրդների այնև՛ս փոխակերպիչի համար հիմնականում կիրառելի չեն, իսկ որոշ դրոյթներ կարելի է կիրառել որոշակի վերապահումներով:

Չետևաբար մանրացված ծղոտ ու մղեղային խառնուրդները հավաքող և տրանսպորտային միջոցին բարձրո՞ղ այնև՛ս փոխակերպիչի կառուցվածքի մշակման ու պարամետրերի հիմնավորմանը ուղղված գիտահետազոտական աշխատանքները և դրանց վերլուծությունների արդյունքների գործնական կիրառության խնդիրներն արդիական են ու շատ անհրաժեշտ:

ԵԶՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

1. Գիտական գրականության տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ փոխադրվող նյութի ֆիզիկամեխանիկական ու ատերոդինամիկական հատկությունները վճռորոշ նշանակություն ունեն այնև՛ս փոխակերպիչների հիմնական հանգույցների կառուցվածքային պարամետրերի հաշվարկման ու հիմնավորման վրա: Մինչդեռ մղեղային խառնուրդների ֆիզիկատեխնոլոգիական հատկություններին ուղղված գիտական աշխատանքներ ընդհանրապես բացակայում են:

2. Խնդրի ներկա վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ մղեղային խառնուրդների հավաքման

գոյություն ունեցող սարքավորումները տեղակայվում են կոմբայնի վրա, կառուցվածքով բարդ են, մետաղատար: Կոմբայնի արտադրողականությունը նվազում է 17-20 %-ով. բարձրանում է վառելանյութի տեսկարար ծախսը: Հավաքված մղեղի փոխադրման համար պահանջվում է բարձր կողապատերով կցասայլակ տրակտորի հետմիասին:

3. Չնայած խնդրի արդիականությանն ու տնտեսական հիմնավորվածությանը, ներկայումս մղեղային խառնուրդները դաշտերից գրեթե չեն հավաքվում, կառուցվածքով պարզ և հուսալի մեքենաների բացակայության պատճառով:

4. Հանրապետության ֆերմերային ու գյուղացիական տնտեսությունների դաշտերից մղեղային խառնուրդների հավաքումը հրատապ է և միաժամանակ լուծում է երկու կարևոր խնդիր.

- անասնապահությանը ապահովել լրացուցիչ 50@60հազ.տոննա արժեքավոր կերով, ամրապնդել կերային բազան և բարձրացնել կենդանիների մթերատվությունը,

- դաշտերը մաքրել մոլախոտերի սերմերից, նվազեցնելով մոլախոտերի դեմ քիմիական պայքարի ֆինանսական միջոցներն ու աշխատանքային ծախսումները:

1. Մղեղային խառնուրդները հավաքող ու բարձող մեքենայի կառուցվածքի մշակմանը, պարամետրերի հիմնավորմանը ուղղված գիտահետազոտական ու գիտափորձնական աշխատանքները և դրանց վերլուծությունների արդյունքների գործնական կիրառության խնդիրներն արդիական են և անհրաժեշտ:

1.5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԵՏԱՉՈՏՈՒ ԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծղոտի և մղեղային խառնուրդների հավաքման և հեռացման տեխնոլոգիական գործընթացների ու մեքենասարքավորումների կառուցվածքի ներկայացված վերլուծությունն ու կերային

բազայի ամրապնդման համար մղեղի հավաքման անհրաժեշտությունը թույլ են տալիս ձևակերպել աշխատանքի նպատակը՝ մշակել մղեղային խառնուրդների հավաքման և տրանսպորտային միջոցին բարձր ման պարզ կառուցվածքի, հուսալի պնևմատիկալիչ, կատարել տեսական ու գիտափորձ-նական հետազոտություններ և լավարկել նրա կառուցվածքային պարամետրերն ու շահագործական ռեժիմները: Այդ նպատակով առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- հացաբույսերի ծղոտի ու մղեղային խառնուրդների հավաքման ու հեռացման գոյություն ունեցող տեխնոլոգիաների ու տեխնիկական միջոցների կառուցվածքի վերլուծության հիման վրա մշակել մղեղային խառնուրդների հավաքման ու տրանսպորտային միջոցին բարձր ման պարզ կառուցվածքային սխեման և մշակել նրանախագիծը,
- գիտափորձերով որոշել մղեղային խառնուրդի \$ֆիզիկամեխանիկական ու ատերոդինամիկական հատկությունները, որոնք հիմք կհանդիսանան պնևմատիկալիչի կառուցվածքային և շահագործական պարամետրերի հիմնավորման ու լավարկման համար,
- տեսական հետազոտություններով կապ հաստատել ներծծող ճկախողովակի երկրաչափական չափերի, շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի կինեմատիկական պարամետրերի, մեքենայի շարժման արագության ու մղեղաթմբի չափերի միջև,
- տեսական հետազոտություններով հիմնավորել ներծծող օդատարի կառուցվածքային պարամետրերը, մղեղային խառնուրդի \$ֆիզիկամեխանիկական և ատերոդինամիկական հատկություններից կախված,
- պատրաստել լաբորատոր սարքավորում և գիտափորձերով ճշգրտել տեսական հետազոտությունների արդյունքները,
- պատրաստել առաջարկվող պնևմատիկալիչի փորձնական նմուշը, արտադրական պայմաններում փորձարկել և հիմնավորել նրա աշխատունակությունը,

- տալ մղեղային խառնուրդները հավաքող և տրանսպորտային միջոցին բարձրղ պնևմատիոխակրիչի տեխնիկատնտեսական հիմնավորումը:

**2. ՊՆԵՎՄԱՓՈԽԱԿՐԻՉԻ ՏԱՏԱՆՎՈՂ ՃԿԱԽՈՂՈՎԱԿՈՎ
ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՆԵՐԾՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԳՈՐԾՆԹԱՅԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ**

**2.1. ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

Մղեղային խառնուրդների հավաքման ու տրանսպորտային միջոցին բարձրման պնևմատիոխակրիչի կառուցվածքային սխեմայի


մշակման ժամանակ հաշվի են առնվել հետևյալ ագրոտեխնիկական պահանջները.

- հավաքված մղեղային խառնուրդի աղտոտվածությունը հողով չպետք է գերազանցի 2% [89],
- մղեղահավաք մեքենան կառուցվածքով պետք է լինի պարզ, աշխատանքում հուսալի և ունենա փոքր զանգված,
- մեքենայի կառուցվածքը պետք է հնարավորություն ունենա տեղի այն տեղակայել ցանկացած կցասայլակի կցանքի վրա, առանց լրացուցիչ, կառուցվածքային փոփոխությունների և ամրացվի անուրնների օգնությամբ,
- հնարավոր լինի պատրաստել արհեստանոցային պայմաններում և լինի էժան:

2.2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ ՀԱՎԱՔՈՂ ՊԼԵՎՍԱՓՈՒԱԿՐԻՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ

Վերլուծելով ծղոտի հավաքման ու հեռացման գոյություն ունեցող տեխնոլոգիաներն ու մեքենաների համակարգը, մեր կողմից առաջարկվել է մղեղի հավաքման պնևմատիխակրիչ, որի համար ստացվել է գյուղտի արտոնագիր [69]:

Առաջարկվող պնևմատիխակրիչի տեխնոլոգիական սխեման և փորձնական նմուշի լուսանկարը պատկերված են նկ.2.1-ում:



Նկ.2.1 Մղեղի հավաքման պնևմատիխակրիչի տեխնոլոգիական սխեմա և փորձնական նմուշի լուսանկարը:
1-օդամղիչ, 2-մղող օդատար, 3-նեղծծող ճկափող, 4-էլեկտրաշարժաքեր,

5-շ ու ռ տվի կաշ արժաթևայ ին մեխանիզմ, 6-ծայ րափողակ, 7-կարգավորիչ ստուտակ, 8-ուղղորդիչ, 9-կարդանայ ին լիսեն:

Պնևմատիկակրիչը տեղակայվում է կցասայլի շրջանակի վրա առջևի մասում:

Պնևմատիկակրիչը աշխատում է հետևյալ կերպ՝ օդափոխիչը 1, որը շարժաբերվում է տրակտորի ՅԱԼ-ից, ստեղծում է նոսրացում ներծծող ճկափողում 3: Նոսրացման շնորհիվ մղեղը և մոլախտերի սերմերը ծայրափողակով 6, ներծծվում են ճկափող, իսկ այնտեղից մուտք գործում օդամղիչ 1, այնուհետև մղող օդատարով 2 թափվում սայլակի թափքի մեջ:

Դաշտի մակերևույթին գտնվող մղեղաթումբից մղեղային խառնուրդը հավասարաչափ և լրիվ ներծծելու համար, ծայրափողակը ճկափողի հետ միասին, ագրեգատի շարժմանը ուղղահայաց ուղղությամբ կատարում է հետադարձ-համընթաց շարժում շուռտվիկաշար-ժաթևային մեխանիզմի օգնությամբ: Ծայրափողակը շարժվում է ըստ բարձրության կարգավորվող ուղղորդների վրա, որով ապահովվում է անհարժեշտ բացակ ծայրափողակի և մղեղաթմբի միջև:

ճկափողի կառուցվածքը ապահովում է, տատանման ժամանակ, նրա երկարության փոփոխությունը, չխախտելով համակարգի հերմետիկությունը:

Շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի համար, որպես շարժաբեր օգտագործվել է միկրոէլեկտրաշարժիչ ռեդուկտորի հետ, որը սնվում է տրակտորի ակունում յատորից:

Առաջարկված պնևմատիկակրիչը կառուցվածքով պարզ է, ոչ մետաղատար, կցասայլակի վրա տեղակայման համար լրացուցիչ կառուցվածքային փոփոխություններ չի պահանջվում, ամրացվում է անուրների օգնությամբ:

Պնևմատիկակրիչի տեխնիկական բնութագիրը.

Արտադրողականությունը	1,5...2,0 տ/ժ, (2...2,5 հա/ժ)
Օդափոխիչը	կենտրոնախուլյս N2,5
Ներծծող խողովակը	ճկուն, D=80...100մմ
Ծայրափողակը	կլոր (Φ 100), ճեղքավոր (200x50)

Ներծծման բարձրությունը	1000...1500մմ
Մղման բարձրությունը	2000...2500մմ
Եզրաչափաբերը (առանց կցասայլակի)	600x600x4000մմ
Չանգվածը	22 կգ

2.3. ՊՆԵՎՄԱՓՈՒԱԿՐԻՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Պնևմատիկայի սկզբնական փուլի աշխատանքի սկզբունքը հիմնված է, օդատարի սկզբնամասում և վերջնամասում ստեղծված ճնշումների տարբերությամբ պայմանավորված, մեծ արագությամբ օդի հոսքով այլ նյութերի տեղափոխելու հատկությամբ: Պնևմատիկայում իրենից ներկայացնում է երկբաղադրիչ համակարգի՝ օդի և պինդ մասնիկների տեղափոխումը: Շարժման մեջ գտնվող օդի և պինդ մասնիկների համակարգը անվանում են հոսք: Եթե հոսքում պարունակվում է երկուսից ավել բաղադրիչներ, ապա հոսքը կոչվում է բազմաբաղադրիչ:

Մղողային խառնուրդի մղողային թմբերից հավաքումը և տեղափոխումը բազմաբաղադրիչ հոսք է, որտեղ դիսպերս միջավայրը բաղկացած է մղողից, ծղոտի մասնիկներից, զանազան մոլախտների սերմերից, որոնք իրարից տարբերվում են ֆիզիկամեխանիկական, աերոդինամիկական և այլ հատկություններով:

Պնևմատիկայի սկզբնական փուլում օդը հանդիսանում է հոծ միջավայր (сплошная среда) և կատարում է փոխադրող ֆունկցիա, իսկ փոխադրվողը՝ պինդ մասնիկներն են:

Բեռների փոխադրումը պնևմատիկայի ովկարող է կատարվել տարբեր ռեժիմներով՝ կախված հոսքի պարամետրերից: Յուրաքանչյուր ռեժիմում է օդի արագությամբ U_{0n} , փոխադրվող բեռի մասնիկների և օդի զանգվածի հարաբերությամբ (կոնցենտրացիայի գործակից) μ և ավելցուկային ճնշման մեծությամբ [6, 14, 17, 26, 27, 29, 38 և այլն]:

Կոնցենտրացիայի գործակից μ :

Կախված վերը թվարկված պարամետրերի մեծություններից տարբերվում են բեռների փոխադրման երկու ռեժիմ՝ պնևմատիկայում ցածր կոնցենտրացիայով $\mu = 0,5 \dots 1$ և բարձր կոնցենտրացիայով $\mu = 4 \dots 8$:

Որպես կոնցենտրացիայի գործակից μ ընդունված է անվանել $\mu = \frac{G}{G_{0\eta}}$ հարաբերությունը, որտեղ G -ն կոշտ բաղադրիչի (բեռի)

վայրկենական ծախսն է, իսկ $G_{0\eta}$ -ը օդի վայրկենական ծախսը:

Բեռի մասնիկների անրոդինամիկական հատկությունները:

Մասնիկների անրոդինամիկական հատկությունները բնութագրվում են կրիտիկական արագության $U_{կր}$, օդի դիմադրության գործակցով k և առաջատայնության գործակցով k_w :

Մասնիկի վրաօդային հոսքի ազդող ուժը:

Եթե բեռի մասնիկը տեղակայված օդային հոսքում, ապա մասնիկի վրա ազդող ուժ, որի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով [33, 36, 37, 39, 43 և այլն]:

$$R = f \cdot \rho F_1 (U - C)^2 + k F \rho \frac{(U - C)^2}{2}, \quad (2.1)$$

որտեղ՝ f -ը մասնիկի և օդի հոսքի միջև շփման գործակիցն է, F_1 -ը շփման մակերեսը, k -ն՝ օդի դիմադրության գործակիցը, ρ -ն՝ օդի խտությունը, U -ն՝ օդային հոսքի արագությունը, մ/վ, C -ն՝ բեռի մասնիկի արագությունն է, մ/վ, ρ -ն՝ օդի խտությունը, կգ/մ³, F -ը՝ մասնիկի օդի հոսանքին ուղղահայաց հարթության մակերեսն է, մ²:

Երբ օդի արագությունը փոքր է (լամինար ռեժիմ) (2.1) արտահայտությունում առաջին անդամը գերազանցում է երկրորդ անդամին:

Սովորաբար, այն և մաթեմատիկական իրագործվում է օդային հոսքի մեծ արագության պայմաններում (տուրբուլենտ ռեժիմ), որի ժամանակ անտեսվում է առաջին անդամը և հավասարումը ընդունում է հետևյալ տեսքը.

$$R = k F \rho \frac{(U - C)^2}{2}, \quad (2.2)$$

Կրիտիկական արագություն:

Մասնիկի վրա ազդող R ուժի ազդեցության տակ, օդային հոսքում գտնվող m զանգվածով մասնիկը կարող է շարժվել վերև, երբ $R > mg$, ցած, երբ $R < mg$ կամ գտնվել կախյալ վիճակում, երբ $R = mg$ և $C = 0$: Տեղադրելով (2.2) հավասարման մեջ $R = mg$ և $C = 0$ կստանանք օդի կրիտիկական $U_{կր}$ արագության մեծությունը, որի

ժամանակ մասնիկը օդի հոսքում կգտնվի կախված վիճակում [49, 57, 85, 90, 94, 95].

$$U_{կր} = \sqrt{\frac{mg}{k \cdot \rho \cdot F}} \quad (2.3)$$

Օդի դիմադրության գործակցի մեծությունը կախված է մասնիկի ձևից ու մակերևույթի մեծությունից, օդի հոսքի արագությունից: Դիտարկելով (2.2) բանաձևը և պայմանականորեն ընդունելով, որ մասնիկը ամրացված է ($C=0$), ապակարելի է որոշել օդի դիմադրության գործակցը.

$$k = \frac{R}{\rho F U^2} \quad (2.4)$$

Գործնականում հաճախ օգտագործում են այլ ցուցանիշ՝ առագաստայնության գործակից, որը որոշվում է հետևյալ կերպ [34, 36, 85, 90]: Արագացումը, որը հաղորդվում է օդային հոսքում R ուժի կողմից G զանգվածով մասնիկին կլինի.

$$j = \frac{R}{G} = \frac{k \rho F}{G} U^2 = k_w U^2 \quad (2.5)$$

$k_w = \frac{k \rho F}{G}$ մեծությունը ընդունված է անվանել առագաստայնության գործակից:

Պնևմատիկայի օդային հոսքի աշխատանքային արագության մեծությունը սահմանվում է փոխադրվող նյութի ճախրելու արագությունից և կոնցենտրացիայի գործակցից կախված: Այդ արագությունը պետք է ավելի մեծ լինի, քան փոխադրվող նյութի մասնիկների ճախրման արագությունը.

$$U = \varphi \cdot U_{կր} \quad (2.6)$$

Որտեղ՝ φ -ն գործակից է կախված նյութի տեսակից և կոնցենտրացիայի գործակից:

Կոնցենտրացիայի գործակից:

Բազմաբաղադրիչ հոսքում խառնուրդի զանգվածի հարաբերությունը օդի հոսքի զանգվածին անվանում են կոնցենտրացիայի գործակից.

$$\mu = \frac{G_d}{G_{ոդ}} \quad (2.7)$$

Օդի զանգվածը՝ $G_{ոդ}$ -ը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$G_{ոդ} = U \cdot \rho_{ոդ} \quad (2.8)$$


2.4. ՊԼԵՎՍԱՓՈԽԱԿՐԻՉԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆԸ

Պնևմատիոխակրիչի կառուցվածքային սխեմային համապատասխան աշխատանքային գործընթացը կարելի է բաժանել երկու փուլի.

- կիսուկից մղեղային խառնուրդի ներծծման փուլ, որն իրագործվում է ծայրափողակով և ներծծող ճկախողովակով,
- ներծծված մղեղային խառնուրդի մղման փուլ, որն իրագործվում է օդամղիչով և մղման խողովակաշարով:

2.4.1. ՊԼԵՎՍԱՓՈԽԱԿՐԻՉԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆԸ

Մղեղաթմբից մղեղային խառնուրդի ներծծման տեխնոլոգիական սխեման պատկերված է նկ.2.2-ում:



Նկ.2.2. ներծծման

Մղեղային խառնուրդի տեխնոլոգիական սխեմա:

Համաձայն բերված սխեմայի մղեղային խառնուրդի ներծծման գործընթացը կարելի է բաժանել երեք հաջորդական փուլերի՝


- խառնուրդի ներծծումը ծայրափողակի մեջ,
- ճոճվող ճկախողովակով մղեղային խառնուրդի շարժումը դեպի վեր,

- Խառնուրդի շարժումը ճկախողովակի կոր մասով մինչև օդամղիչ:

Այժմ ուսումնասիրենք մղեղային խառնուրդի շարժումը երեք գործընթաց-ներում:

1. Ծայրափողակով մղեղային խառնուրդի ներծծման փուլը

Օդամղիչի կողմից ստեղծվող նոսրացման շնորհիվ ծայրափողակի մուտքի մասում ստեղծվում է օդային հոսք, որը հավասարաչափ ընդարձակվում է մուտքի անցքից հեռանալուն զուգընթաց, իսկ արագությունը փոքրանում է հասնելով գրոյի,ինչպես ցույց է տրված նկ.2.3- ում:



Նկ.2.3. Ներծծող օդային վերընթաց հոսքի սխեմա

Օդի հոսքի սկզբնատեղամասում (I), ծայրափողակի մուտքի մոտ, ներծծման արագությունը ամենամեծն է, U_{max} : Ծայրափողակի մուտքի անցքից հեռանալուն զուգընթաց օդի հոսքի արագությունը նվազում է: Արագության էայ ուրները ցույց են տալիս օդի հոսքի արագությունների նվազման բնույթը II և III տեղամասերում: Փորձնական ճանապարհով որոշելով ծայրափողակի ներծծող վերընթաց օդային հոսքի կինեմատիկան, կարող ենք որոշել ծայրափողակի կառուցվածքային պարամետրերը, ինչպես

նաև սահմանել նրա և մղեղաթմբի միջև օպտիմալ հեռավորությունը, որով կապահովվի ներծծման գործընթացի արդյունավետությունն ու կկանխվի հավաքված մղեղային խառնուրդի հողով աղտոտվելը:

Այժմ դիտարկենք մասնիկի շարժման գործընթացը ծայրափողակով: Գործընթացի հետազոտման նպատակն է, որոշել մասնիկի C արագությունը ծայրափողակ մուտք գործելիս և օդային հոսքի ճնշման կորուստը այդ ընթացքում: Այդ մեծությունների իմացությունը անհրաժեշտ են պնևմափոխակրիչի կառուցվածքային պարամետրերի (խողովակաչարի տրամագծի d , օդամղիչի հզորության N , արտադրողականություն W) հաշվարկման և նախագծման համար: Վերընթաց օդային հոսքի U արագությամբ պայմանավորված մղեղային խառնուրդի մասնիկի վրա ազդող R ուժի շնորհիվ, մասնիկն արագացումով մուտք է գործում ծայրափողակ:

Մասնիկը մղեղային թմբից ծայրափողակ, իսկ այնտեղից տատանվող ճկախողովակ մուտք գործելիս, փոխում է ինչպես արագությունը, այնպես էլ շարժման ուղղությունը:

Խողովակով շարժվող մասնիկի վրա, բացի անրոդինամիկական ուժից R , ազդում են նաև ընդլայնական ուժեր, որոնք հետևանք են օդային վերընթաց հոսքի արագությունների էայուրայի ասիմետրիկության: Մասնիկներին շրջահոսող օդային վերընթաց հոսքի արագությունների տարբերության հետևանքով առաջանում է ճնշումների տարբերություն, որի արդյունքում գործում են ընդլայնական ուժերը, որոնք առաջացնում են մասնակի պտույտ: Վերջինս էլ, իր հերթին, առաջացնում է Մագնուսի էֆեկտ, որի էությունը կայանում է նրանում, որ օդային հոսքում պտտվող մասնիկի վրա ազդում է ուժ, որն ուղղահայաց է հոսքի արագության ուղղությանը [38, 39, 47, 67]:

Անհրաժեշտ է նշել, որ այս գործընթացի ուսումնասիրությունը, նրա վրա ազդող բոլոր գործոնները հաշվի առնելով, շատ բարդ է, և ստացված արդյունքները վերլուծության ենթարկել ու գործնականում կիրառելը գրեթե անհնարին: Սակայն, որոշ ենթադրություններ կատարելով, կարելի է լուծել խնդիրը և բացահայտել ծայրափողակում, վերընթաց

օդային հոսքում, մղեղային խառնուրդի շարժման օրինաչափությունները:

Օդամղիչով ստեղծված օդի նոսրացումը տարածվում է ծայրափողակ և այնտեղ ստեղծվում է ներծծող վերընթաց օդի հոսք: Այդ հոսքի ազդեցության տակ թեթև մասնիկները, որոնց կրիտիկական արագությունը փոքր է ծայրափողակում օդի արագությունից, մուտք են գործում ծայրափողակ նրա ողջ հատույթով, որոշակի արագացումով:

Ի տարբերություն թեթև մասնիկների, ծանր մասնիկները կիտուկից դեպի ծայրափողակ կշարժվեն հատույթի միայն կենտրոնական մասով, որտեղ օդի հոսքի արագությունը ավելի մեծ է, քան այդ մասնիկների կրիտիկական արագությունն է:

Մասնիկի վրա ազդում են ծանրության ուժը mg և օդի դիմադրության ուժը R (նկ.2.3):

Եթե մասնիկը շարժվում է C արագությամբ, ապա շարժման դիֆերենցիալ հավասարումը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով [5, 36, 39, 52, 85, 94, 96]:

$$m \frac{dC}{dt} = R - mg : \quad (2.9)$$

Չաշվի առնելով (2.5) և (2.6) բանաձևերը R -ի արտահայտությունը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$R = \frac{mg}{U_{լր}^2} (U - C)^2 \quad :$$

(2.10)

Տեղադրելով R -ի արժեքը (2.9) հավասարման մեջ և կատարելով փոփոխականի փոխարինում $U-C=V$, $dU=-dV$, ապա (2.9) հավասարումը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$-\frac{U_{լր}^2}{g} \left(\frac{dV}{V^2 - U_{լր}^2} \right) = dt : \quad (2.11)$$

Ինտեգրելով ստացված հավասարումը կստանանք .

$$-\frac{U_{լր}}{2g} \ln \frac{V - U_{լր}}{V + U_{լր}} = t + A ,$$

ի՞նչ

$$-\frac{U_{լր}}{2g} \ln \frac{U - C - U_{լր}}{U - C + U_{լր}} = t + A , \quad (2.12)$$

որտեղ՝ A - ն ինտեգրման հաստատունն է:

Կիրառելով սկզբնական պայմանը, երբ $t=0$, $C=0$, կստանանք

$$A = -\frac{U_{\text{լը}}}{2g} \ln \frac{U-U_{\text{լը}}}{U+U_{\text{լը}}}: \quad (2.13)$$

Տեղադրելով A - ի արժեքը (2.12) հավասարման մեջ կստանանք.

$$C = U - U_{\text{լը}} + \frac{2U_{\text{լը}}}{1 + \frac{U-U_{\text{լը}}}{U+U_{\text{լը}}} e^{-\frac{(U-U_{\text{լը}}-c)(U+U_{\text{լը}})}{(U+U_{\text{լը}}-c)(U-U_{\text{լը}})t}}}: \quad (2.14)$$

Ստացված (2.14) արտահայտության վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնիկի ծայրափողակ մուտքի արագությունը C -ն կախված է նրա աերոդինամիկական հատկություններից և օդի արագությունից: Դժվար է նկատել նաև, որ մասնակի սահմանային արագությունը հավասար է օդի արագության և կիրտիկական կամ մասնիկի ճախրման արագության տարբերությանը՝

$$\lim_{t \rightarrow \infty} C = U - U_{\text{լը}} \quad (2.15)$$

2.4.2. ՃՆՇՄԱՆ ԿՈՐՈՒՍՏԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՍՅՐԱՓՈՂԱԿՈՒՄ

Ճնշման կորուստ ասելով հասկանում են ներծծող ծայրափողակի երկու ծայրերի օդի ճնշումների տարբերությունը՝ ΔP , որն առաջանում է օդի և նրանում գտնվող մասնիկների ծայրափողակով դեպի վեր շարժման ժամանակ: Պնևմատոլոգիայի առարկայում ճնշման կորուստի հարցերով զբաղվել են Գ.Վելչովը [14], Մ.Պ.Կալինովը [47], Դոյադիոն [26] և այլ հետազոտողներ: Նրանց կողմից առաջարկվել են բանաձևեր կորուստների որոշման համար, ինչպես խողովակաչարի ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական տեղամասերում:

Դոյադիոն Ա.Մ. և Կրամեր Ա.Ս. [26] թափառքի տեղամասում ճնշման կորուստները առաջարկվում են որոշել հետևյալ բանաձևով.

$$\Delta P = \beta_1 \mu \frac{\rho V^2}{2}, \quad (2.16)$$

որտեղ^a $\beta_1 = 2,3 - 0,08U_{\text{լը}}$:

Նրանք հաստատել են, որ խառնուրդի կոնցենտրացիայի գործակցի աճի հետ խողովակաչարում մասնիկի ճախրման արագությունը նվազում է:

Հավելենք, որ նշված բոլոր հետազոտությունները վերաբերում են մեծ արտադրողականության ունեցող

պնևմափոխակրիչների բեռնող համակարգերին, որտեղ բեռի մասնիկները մուտք են գործում ինքնահոս կերպով, առանձին խողովակով, իսկ համակարգը ունի բավականին մեծ երկարություն: Ուստի առաջարկվող բանաձևերը մղեղային խառնուրդի պնևմափոխակրիչների ներծծող ծայրափողակի համար կիրառելի չեն:

Մեր կողից առաջարկված պնևմափոխակրիչի բեռնման հարմարանքը ծայրափողակ է, որի երկարությունը մեծ է, որտեղ մղեղային խառնուրդի մասնիկները մուտք են գործում նրանց վրա ազդող վերամբարձ ուժի շնորհիվ, որը ստեղծվում է վերընթաց շարժվող օդային հոսքի կողմից:

Ծայրափողակում ճնշման կորուստի որոշման համար, դիտարկենք մասնիկի, առանց սկզբնական արագության, դեպի ծայրափողակ շարժումը, օդի կողմից նրա վրա ազդող ուժի ազդեցության տակ:

Մղեղաթմբից մղեղային խառնուրդի կոշտ մասնիկների դեպի ծայրափողակ շարժման ընթացքում ճնշման կորուստների հաշվարկման համար, կիրառենք նյութական կետի շարժման քանակի փոփոխման թեորեման [5, 80, 83, 96].

$$R \cdot \Delta t = m, \quad (2.17)$$

Որտեղ՝ R -ը ծայրափողակ մտնող մղեղային խառնուրդի վրա օդային հոսքի ազդող ուժն է, Δt -ն՝ մղեղային զանգվածի թափառքի ժամանակը, m -ը՝ մղեղային խառնուրդի զանգվածը, C -ն՝ մղեղային խառնուրդի ծայրափողակ մտնել ու արագությունը:

Մղեղային խառնուրդի զանգվածի վրա ազդող օդի հոսքի ուժը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$R = \Delta P_{\delta} F, \quad (2.18)$$

Որտեղ՝ ΔP_{δ} -ն ծայրափողակում ճնշման կորուստն է, F -ը՝ ծայրափողակի ներծծման խողովակի ընդլայնական հատույթի մակերեսը:

Տեղադրելով R - ի արժեքը (2.17) հավասարումից (2.18) հավասարման մեջ կստանանք.

$$\Delta P_{\delta} F \Delta t = mC : \quad (2.19)$$

Կատարենք ձևափոխություններ և (2.19) հավասարումը բերենք հետևյալ տեսքի.

$$\Delta P_{\delta} = \frac{mC\rho U^2}{F\Delta t\rho U^2} : \quad (2.20)$$

Չաշվի առնելով, որ $\frac{m}{\Delta t} = G$, որտեղ G -ն մղեղային խառնուրդի վայրկենական ծախսն է, $F\rho U = G_{ող}$, որտեղ^a $G_{ող}$ -ը օդի վայրկենական ծախսն է և $\mu = \frac{G}{G_{ող}}$, որտեղ՝ μ -ն խառնուրդի կոնցենտրացիայի գործակիցը, ապա կստանանք ծայրափողակում օդի ճնշման կորուստի հաշվարկման բանաձև.

$$\Delta P_{\delta} = \mu \cdot \rho \cdot U \cdot C : \quad (2.21)$$

Ստացվեց, որ ծայրափողակում (մասնիկների թափառքի տեղամասում) ճնշման կորուստը ուղիղ համեմատական է խառնուրդի կոնցենտրացիայի գործակցին, օդի՝ U և մղեղային խառնուրդի՝ C արագություններին: Ստացված բանաձևը բավականին պարզ է և շատ հարմար գործնական կիրառության համար:

2.4.3. ՄԵՂԱՅԻՆ ԽԱՌՈՒՐԴԻ ՈՒՂԱՁԻԳ ՏՍՏԱՆԿՈՂ ԽՈՂՎԱԿՈՎ ՇԱՐՄԱՆ ՓՈՒԼԸ

Պնևմատիկայի ճյուղերի ուղղաձիգ կամ հորիզոնական նյութատար խողովակով բեռների փոխադրմանը նվիրված հայտնի են մի շարք հետազոտական աշխատանքներ [2, 27, 29, 33, 36, 38, 39, 51, 54, 57, 65, 103, 104, 105, 106 և այլն]:

Հետազոտվել են անշարժ հորիզոնական կամ ուղղաձիգ խողովակով շարժվող երկբաղադրիչ հոսքը և որոշվել են հոսքում օդի և նյութի մասնիկների արագությունները, օդի ճնշման կորուստները, տեղական դիմադրության գործակիցները և այլ պարամետրեր:

Սակայն հետազոտական աշխատանքներ նվիրված տատանվող ուղղաձիգ խողովակով մղեղային խառնուրդի շարժմանը մեզ հայտնի չէ (առաջարկված պնևմատիկայի ճյուղում ներծծող ճկախողովակը կատարում է տատանողական շարժում շունտով կաշարժաթևային մեխանիզմի օգնությամբ):

Մղեղային խառնուրդը ի տարբերություն համասեռ նյութերի (ցորեն, գարի ոլոռ և այլն) իր մեջ պարունակում է ծղոտի մանր, մղեղ և բազմաթիվ մոլախտերի սերմեր, որոնք իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով ու առաքաստայնության գործակցով խիստ տարբերվում են իրարից: Հատկությունների խիստ տարբերությունները առաջ են բերում մի շարք տեխնիկական դժվարություններ գործընթացի հետազոտման ժամանակ:


Նյութատար խողովակով շարժվող մղեղային խառնուրդի հոսքը կարելի է բաժանել երկու խմբի՝ առաջին խումբ- ծղոտի մանրը և մղեղը, որոնք ունեն մեծ առաքաստայնության գործակից ($k_w > 2$) և երկրորդ խումբ՝ մոլախտի սերմերը, որոնք ունեն փոքր առաքաստայնության գործակից ($k_w < 1$): Այժմ դիտարկենք մանր ծղոտի և մղեղի մասնիկների շարժման բնույթը նյութատար ներծծման խողովակով:

Քանի որ այդ մասնիկները երկրաչափական չափերով, զանգվածով, առաքաստայնության գործակցով իրարից խիստ տարբերվում են, ապա նրանց վրա օդային հոսքի կողմից ազդող ուժերը նույնապես իրարից խիստ տարբերվում են: Շարժվող թեթև մասնիկները իրենց վրաազդող ուժերի ազդեցության տակ ձեռք են բերում տարբեր արագություններ և այդ արագությունների վեկտորների տարբեր ուղղվածության պատճառով մասնիկները շարժվում են տարբեր ուղղություններով և շատ դեպքերում հարվածելով կամ հպվելով խողովակի պատի ներքին մակերևույթին: Ըստ որում այդ հարվածի կամ հպման հետևանքով նրանք կորցնում են արագությունը, դանդաղում են և թռչում պատից հեռու, ու նրանց անհրաժեշտ է նորից արագացնել, որը բերում է խողովակում ճնշման կորուստի մեծացմանը: Հաճախ, խողովակի պատերի հետ շփվելով մասնիկները այնքան են կորցնում արագությունը, որ պատի երկայնքով սահում են ցած, մինչև օդի հոսքի կողմից նորից տեղափոխվում են վեր: Նշված երևույթը ուղղաձիգ տատանվող խողովակում, սխեմատիկորեն պատկերված է նկ.2.4-ում:

Պատկերը միանգամայն այլ է մոլախոտերի սերմերի պարագայում, երբ օդի հոսքի արագության և մասնիկի կրիտիկական արագության տարբերությունը մեծ է:

Ծանր մասնիկները օդային հոսքի ազդեցության տակ շարժվում են վերընթաց նյութատար խողովակի ողջ հատույթով: Նյութական հոսքի կենտրոնական մասով մասնիկները շարժվում են առավելագույն արագությամբ և ուղղագիծ: Հոսքի եզրային մասերում, մասնիկները վերընթաց շարժման ժամանակ շփվում են խողովակի պատերի ներքին մակերևույթի հետ, որի արդյունքում կորցնում են արագությունը: Արագությունը կորցրած մասնիկները ծանրության ուժի ազդեցության տակ սահում են ցած: Այդ մասնիկների զգալի մասը, հետագայում ընկնելով օդային հոսքի մեծ արագության գոտի, նորից ձեռք են բերում անհրաժեշտ արագություն և շարժվում վեր:

Ծանր մասնիկների շարժումը տատանվող նյութատար խողովակում սխեմատիկորեն պատկերված է նկ.2.4.բ -ում: Վերը նկարագրված գործընթացների արդյունքում ընկնում է այնամախոխակրիչի արտադրողականությունը և մեծանում է ներգիայի տեսակարար ծախսը: Նկարագրված բացասական երևույթը կարելի է վերացնել օդի հոսքի արագության մեծացումով: Սակայն օդի հոսքի արագության մեծացումը իր հետ առաջացնում է նոր խնդիրներ: Մեծանում է էներգիայի տեսակարար ծախսը, պահանջվում է մեծ հզորությամբ օդամղիչ և ավելի ինտենսիվ է դառնում խողովակի պատերի մաշը: Հաճախ նշված երևույթները պատճառ են դառնում բեռի խցանմանը նյութատար խողովակում:



Նկ.2.4. Նյութի մասնիկների փոխադրումը թեք տատանվող նյութատար խողովակով.

ա- թեթև մասնիկներ (ծղոտի մանր, մղեղ), բ- մոլ փոստերի սերմեր:

Այսպիսով, պնևմատիոխակրիչների համար օդի հոսքի օպտիմալ արագության որոշումը ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն:

Ինչպես արդեն նշվել է, մղեղային խառնուրդների հավաքման պնևմատիոխակրիչի ներծծող խողովակը կատարում է տատանողական շարժում, որպեսզի ապահովվի մղեղային խառնուրդի ներծծումը մղեղաթմբի ամբողջ լայնությամբ: Ներծծող խողովակին տատանողական շարժում հաղորդելու համար կիրառվել է շուռտվիկաշարժաթևային մեխանիզմ, որն իր ազդեցությունն ունի խողովակով շարժվող մասնիկի վարքի ու նրա արագության վրա:

Օդի հոսքի օպտիմալ արագությունը որոշելու համար դիտարկենք տատանվող նյութատար խողովակում կոշտ մասնիկի շարժումը: Շարժվող մասնիկի վրա ազդող ուժերի սխեման պատկերված է նկ.2.5-ում:

Մասնիկի վրա ազդում են հետևյալ ուժերը`[41]


- մասնիկի ծանրության ուժը, mg ,
- մասնիկի վրա օդային հոսքի ազդեցության ուժը, P ,
- խողովակի պատի հակազդեցության նորմալ ուժը, N ,

- խողովակի պատի և մասնիկի միջև շփման ուժը, $T = f \cdot N$, որտեղ f -ը մասնիկի և խողովակի պատի միջև շփման գործակիցն է,
- խողովակի տատանու մից առաջացող իներցիոն ուժը, $P_{\text{ի}}$

Օդի հոսքում գտնվող կոշտ մասնիկի վրա ազդող ուժը կարելի է ներկայացնել հետևյալ արտահայտությամբ [36, 38, 85, 90, 94 և այլն].

$$P = kF\rho \frac{(U-C)^2}{2}, \quad (2.22)$$

որտեղ՝ k -ն անբողիսամիկական դիմադրության գործակիցն է, F -ը մասնիկի ընդլայնական հատույթի մակերեսն է, U -ն օդի, C -ն՝ մասնիկի արագությունը:



Նկ.2.5. Թեք նյութատար, ճոճվող խողովակում շարժվող մասնիկի վրա ազդող ուժերի սխեմա:

Շուռնովիկաշարժաթևային մեխանիզմի $r/l \rightarrow \min$ պայմանի դեպքում, որտեղ՝ r - ը շուռնովիկի շառավիղն է, l - ը շարժաթևի երկարությունը, տարվող օղակի արագացումը կարող է ներկայացվել հետևյալ տեսքով [49, 55, 85 և այլն]:

$$j = \omega^2 r \cos \omega t, \text{ երբ } \cos \omega t = 1, j = \omega^2 r$$

Չե տևաբար հատիկի վրա ազդող իներցիոն ուժի մեծությունը կլի ինի.

$$P_{\text{ի}} = mj = m\omega^2 r \quad (2.23)$$

Հատիկի վրա ազդող նորմալ ուժի մեծությունը որոշելու համար պրոյեկտենք բոլոր ուժերը OX առանցքի վրա՝

$$N - mgsin\alpha + P_{\text{ի}}\cos\alpha = 0, \text{ որտեղից} \quad (2.24)$$

$$N = m\omega^2 r \cos\alpha - mgsin\alpha = m(\omega^2 r \cos\alpha - gsin\alpha), \quad (2.25)$$

Չե տևաբար հատիկի վրա ազդող շփման ուժը կլի ինի.

$$T = f \cdot N = mf(\omega^2 r \cos\alpha - g \sin\alpha) \quad (2.26)$$

Խողովակի ներսում հատիկի շարժման դիֆերենցիալ հավասարումը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$m \frac{d^2 y}{dt^2} = P - T - mg \cos\alpha - P_f \sin\alpha : \quad (2.27)$$

Տեղադրելով (2.27) հավասարման մեջ P -ի, P_f -ի, N -ի և T -ի արժեքները (2.22), (2.23), (2.25),(2.26) հավասարումներից և հաշվի առնելով, որ $\frac{dy}{dt} = C$ և կատարելով որոշ ձևափոխություններ կստանանք.

$$m \frac{dC}{dt} = kF\rho \frac{(U - C)^2}{2} - m\omega^2 r(f \cos\alpha + \sin\alpha) - mg(f \sin\alpha + \cos\alpha): \quad (2.28)$$

Երբ $\frac{dC}{dt} > 0$, ապամասնիկի վրա օդի հոսքի ուժն ավելի մեծ է, քան ծանրության և շփման ուժերը և մասնիկը ներծծող խողովակով կբարձրանա վեր:

Երբ $\frac{dC}{dt} < 0$, ապա օդի հոսքի ուժն ավելի փոքր է, քան մասնիկի ծանրության և պատի նկատմամբ շփման ուժերը և մասնիկը ցած կընկնի:

Դիտարկենք հավասարում (2.28), երբ $\frac{dC}{dt} = 0$: Հավասարումը կընդունի հետևյալ տեսքը՝

$$kF\rho \frac{(U - C)^2}{2m} = \omega^2 r(f \cos\alpha + \sin\alpha) + g(f \sin\alpha + \cos\alpha): \quad (2.29)$$

Հաշվի առնելով, որ $(U - C) = U_{լր}$, անվանում են օդի հոսքի կրիտիկական արագություն, որի ժամանակ մասնիկները օդում ճախրում են, ապա տատանվող նյութատար խողովակում օդի կրիտիկական արագության մեծությունը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$U_{լր} = \sqrt{\frac{2m[\omega^2 r(f \cos\alpha + \sin\alpha) + g(f \sin\alpha + \cos\alpha)]}{kF\rho}} : \quad (2.30)$$

Ինչպես հետևում է (2.30) բանաձևից մղեղային խառնուրդի կրիտիկական արագության մեծությունը կախված է շոռուսովիկի անկյուննային արագությունից ω , շառավղից r , մղեղային խառնուրդի ու խողովակի պատի միջև շփման գործակցից f , օդի դիմադրության գործակցից k , նյութի մասնիկի խտությունից ρ :

Այս պիսով, տեսական հետազոտության արդյունքում, կապ հաստատվեց մղեղային խառնուրդի ֆիզիկամեխանիկական (f,ρ) ու ատրոդինամիկական հատկությունների (k,F) և շունտվիկաշարժաթևային մեխանիզմի կինեմատիկական պարամետրերի (ω,r) միջև:

Մղեղային խառնուրդի համար կրիտիկական $U_{կր}$ արագությունը կարևոր ատրոդինամիկական բնութագիր է, որն իմանալով ընտրվում է օդի հոսքի օպտիմալ արագությունը տատանվող խողովակով պնևմատիկական չափերում:

Այժմ լուծենք (2.28) և որոշենք տատանվող խողովակում մասնիկի շարժման C արագության կախվածությունը ժամանակից:

Կատարենք նշանակումներ $\frac{k \cdot F \cdot \rho}{2m} = a$, $\omega^2 r (f \cos \alpha + \sin \alpha) + g (\sin \alpha + \cos \alpha) = b$ և հավասարում (2.28) ներկայացնենք հետևյալ տեսքով.

$$\frac{1}{a} \frac{dC}{dt} = (U - C)^2 = \frac{b}{a}: \quad (2.31)$$

Կատարենք փոփոխականի փոխարինում $-C = V$, կունենանք $dC = -dV$: Յետևաբար հավասարում (2.31) կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$\frac{1}{a} \frac{dV}{dt} = V^2 + \left(\sqrt{\frac{b}{a}} \right)^2,$$

կամ

$$\frac{dV}{V^2 + \left(\sqrt{\frac{b}{a}} \right)^2} = a \cdot dt \quad (2.32)$$

Ինտեգրելով (2.32) հավասարումը կստանանք [52, 80].

$$\frac{1}{2} \ln \frac{\sqrt{\frac{b}{a}} + V}{\sqrt{\frac{b}{a}} - V} = a \cdot t + A, \quad (2.33)$$

կամ

$$\frac{1}{2} \ln \frac{\sqrt{\frac{b}{a}} + U - C}{\sqrt{\frac{b}{a}} - U + C} = a \cdot t + A \quad (2.34)$$


որտեղ՝ A-ն ինտեգրման հաստատունն է:

Երբ $t = 0$, $C = 0$, այդ դեպքում $A = \frac{1}{2} \ln \frac{\left(\sqrt{\frac{b}{a}} \right) + U}{\left(\sqrt{\frac{b}{a}} \right) - U}$;

Վերջնական տեսքով կստանանք.

$$\frac{1}{2a} \left[\ln \frac{\sqrt{\frac{b}{a}+U-C}}{\sqrt{\frac{b}{a}-U+C}} - \ln \frac{\sqrt{\frac{b}{a}+U}}{\sqrt{\frac{b}{a}-U}} \right] = t : \quad (2.35)$$

Ստացված (2.35) հավասարման կոմայ ու տերայ ին անալ իզը ց ու յ ց է տալ իս, որ մասնիկի արագությունը $C=f(t)$ աճում է ըստ ՕՄ կորի (նկ.2.6) և ասիմպտոտորեն մոտենում է $U-U_{կր}$ արժեքով օրդինատին:



Նկ. 2.6. մասնիկի արագության փոփոխության օրինաչափությանը ուղղաձիգ տատանվող խողովակում

Այսպիսով ներծծման խողովակում օդի աշխատանքային արագությունը պետք է ընտրել ելնելով մղեղային խառնուրդի այն բաղադրիչի կրիտիկական $U_{կր}$ արագությունից, որն ամենամեծն է, այսինքն՝


$$U > U_{կր max} \quad (2.36)$$

2.4.4. ՃՆՇՄԱՆ ԿՈՐՈՒ ՍՏՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԵՐԾՈՂ ԽՈՂՎԱԿԻ ՈՒՂԻՂ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ

Ներծծող խողովակի ուղիղ տեղամասում օդի ճնշման կորուստների կախվածությունը հոսքի պարամետրերից որոշելու համար, դիտարկենք հոսքի էլեմենտար ծավալի Fdl հավասարակշռությունը [36, 38, 39]:

Ներծծող խողովակի մեջ առանձնացված էլեմենտի (նկ.2.7) վրա ազդում են կրող միջավայրի ճնշման P , շփման $F_{օդ}$, ծանրության $G_{օդ}$,

ուժերը և փոխադրվող նյութերի (մղեղային խառնուրդ) շփման F_2 ,
 իներցիայի $m_{\text{ս}} \frac{du}{dt}$ ու ծանրության $G_{\text{ս}}$ ուժերը:



Նկ.2.7. Ներծծող խողովակում հոսքի շարժման ժամանակ ճնշման կորուստների որոշման սխեման

Չաչվի առնելով, որ ներծծող խողովակի երկարությունը և ընդ փոքր է ($\ell \cong 1,0 \dots 1,5\ell$), ապա ճնշման կորուստները, որոնք առաջանում են կրող միջավայրի ծանրության ուժի ու շփման ուժերի հաղթահարումից կարելի է անտեսել:

Չամաձայն բերված սխեմայի բոլոր ուժերի արոյեկցիան հոսքի շարժման ուղղության վրա կարելի է գրել հետևյալ տեսքով.

$$dPF + G_{\text{ս}} + F_{\text{ս}} + m_{\text{ս}} \frac{dc}{dt} = 0, \quad (2.37)$$

Որտեղ՝ dP -ն ճնշումների տարբերությունն է, $G_{\text{ս}}$ - ը՛ մասնիկների ծանրության ուժը, $F_{\text{ս}}$ - ը՛ մասնիկի շփման ուժը խողովակի պատերի նկատմամբ, $m_{\text{ս}}$ -ն՝ մասնիկների զանգվածը, C - ն՛ մասնիկի շարժման արագությունը:

Փոխադրվող մասնիկների ծանրության ուժը $G_{\text{ս}}$ կարելի է որոշել հետևյալ արտահայտությամբ.

$$G_{\text{ս}} = \rho_{\text{ս}} \cdot gF(1 - \varepsilon)\ell: \quad (2.38)$$

Իսկ մասնիկների և խողովակի պատերի միջև շփման ուժը որոշվում է Դարսի-Վեյբախի հավասարումով [36].

$$F_{\text{ս}} = \frac{d\ell}{d} F(1 - \varepsilon) \frac{\rho_{\text{ս}} C^2}{2}, \quad (2.39)$$

որտեղ ε – ը հոսքի ծակոտենություն գործակիցն է, $\rho_{\text{ս}}$ -ն մասնիկի նյութի խտությունն է:

Փոխադրվող մասնիկների իներցիոն ուժերից առաջացող ճնշման կորուստները որոշվում են հետևյալ բանաձևով.

$$j = m_{\text{ս}} \frac{dC}{dt} = \rho_{\text{ս}}(1 - \varepsilon)FCdC : \quad (2.40)$$

Տեղադրելով մեծությունների արժեքները նախնական (2.37) հավասարման մեջ և ինտեգրելով կատանաք խողովակի ուղիղ մասում ճնշման կորուստի մեծությունը որոշող բանաձև

$$\Delta P_{\text{ու}} = \mu \rho_{\text{ս}} C \left(\frac{g\ell}{c} + \frac{\ell C}{2d} + C \right) : \quad (2.41)$$

Ինչպես հետևում է (2.41) բանաձևից ճկախողովակի ուղիղ տեղամասում օդի ճնշման կորուստի մեծությունը ուղիղ համեմատական է կոնցենտրացիայի գործակցին μ , մասնիկների խտությանը ρ , մասնիկի C արագությանը, խողովակի երկարությանը ℓ և հակադարձ համեմատական ճկախողովակի տրամագծին d :

2.4.5. ՄԵՂԱՅԻՆ ԽԱՌՈՒՐԴԻ ՇԱՐՃՈՒՄԸ ԼԵՐՃՈՂ ԽՈՂՎԱԿԻ ԿՈՐ ՏԵՂԱՄԱՈՎ

Պնևմատիկայի լերձոնի խողովակի ուղիղ տեղամասից բազմաբաղադրիչ հոսքի շարժումը շարունակվում է կոր տեղամասով՝ ծունկով և այն մուտք է գործում օդամղիչ: Յուրաքանչյուր բազմաբաղադրիչ է, որորվհետև նրանում պարունակվում են ծղոտի մանր, մղեղ, մոլախտերի սերմեր, որոնք իրարից խիստ տարբերվում են ֆիզիկամեխանիկական, աերոդինամիկական և այլ հատկություններով:

Պնևմատիկայում կարող է կատարվել տարբեր ռեժիմներով, որոնք որոշվում են հոսքի պարամետրերով՝ օդի արագությամբ, ավելցուկային ճնշմամբ, կոնցենտրացիայի գործակցով:

Բազմաբաղադրիչ հոսքի շարժումը ծունկով սխեմատիկորեն պատկերված է նկ.2.8-ում:


Բազմաբաղադրիչ հոսքը ծունկ մուտք գործելիս, ինչպես պատկերված է սխեմայում (նկ.2.8), խառնված է օդի հետ կազմելով, գրեթե, համասեռ զանգված:

Առաջին տեղամասում, որտեղ սկսվում է մասնիկների վրա կենտրոնախույս ուժերի ազդեցության ուժեղացում, տեղի է

ուևենուևմ բազմաբաղադրիչ հոսքի բաժանուևմ: Քանի որ, կենտրոնախոււյս ուժի ազդեցությունը ծանր մասնիկների վրա ավելի մեծ է, ապանրանք շարժվուևմ են դեպի ծուևկի արտաքին պատ, սեղմվելով նրան, իսկ թեթև բաղադրամասերը շարուևակուևմ են շարժվել խողովակի հատույթի կենտրոնական և ստորին մասերով:

Երկրորդ տեղամասուևմ, փոխադրվող բաղադրամասերը նորից խառնվուևմ են իրար, սակայն շփման հետևանքով ծանր մասնիկների արագությունը որոշակի նվազել է և նրանց մուևտքի արագությունը ավելի մեծ է, քան ելքի: Արագության կորստի պատճառով ծանր մասնիկների մի մասը թափվուևմ է ցած, ստորին պատի վրա:

Շարժվող մասնիկների արագությունների վեկտորների տարբեր ուղղությունների հետևանքով առաջանուևմ են ուժեր, որոնք հատիկներին ստիպուևմ են շարժվել դեպի խողովակի պատերը և սահել պատերով: Պատերով սահելու և առաջացող շփման ուժերի հետևանքով մասնիկները կորցնուևմ են արագությունը և ընկնուևմ խողովակի հատակին՝ հաճախ առաջացնելով խցանուևմ: Օդի արագության մեծությունը, որի ժամանակ առաջանուևմ է խցանուևմ, նախորոք կանխատեսել շատ դժվար է, որովհետև դա կախված է բազմաթիվ գործոններից՝ խողովակի տրամագծից, խողովակի ու մասնիկի միջև շփման գործակցի մեծությունից, մասնիկների ֆիզիկական և աերոդինամիկական հատկություններից և այլն: Օդի արագության մեծացուևմը կարող է նպաստել խցանման բացառմանը, սակայն այն ուևնի իր բացասական հետևանքները: Մասնիկների շարժման արագության մեծացմանը զուգընթաց մեծանուևմ են նրանց վրա ազդող իներցիոն ուժերը, որոնք բերուևմ են մասնիկի և խողովակի պատերի միջև շփման ուժերի մեծացմանը և խողովակի արագ մաշին: Օդի արագության մեծացուևմը պահանջուևմ է կիրառել մեծ հզորության օդափոխիչներ, հետևաբար մեծանուևմ են էներգետիկ ծախսերը և ընկնուևմ գործընթացի արդյունավետությունը:




Նկ.2.8. Բազմաբաղադրիչ հոսքի շարժումը ծուկկով:

Այսպիսով, մղեղային բազմաբաղադրիչ հոսքի շարժումը ծուկկով ունի իր առանձնահատկություններն, ու պնևմատիկայի և անխափան և արդյունավետ աշխատանքի ապահովման համար օդի հոսքի օպտիմալ արագության մեծության որոշումը, կախված մասնիկների ֆիզիկամեխանիկական, աերոդինամիկական հատկություններից ու ծուկկի երկրաչափական պարամետրերից, ունի կարևոր գիտական ու գործնական նշանակություն:

Այժմ դիտարկենք մղեղային բազմաբաղադրիչ հոսքի շարժումը խողովակի ծուկկով և որոշենք մասնիկների շարժման արագության նվազման օրինաչափությունը ծուկկի երկրաչափական պարամետրերից կախված:

Ներծծող խողովակի կոր մասով (ծնկով) շարժվող հոսքի մասնիկների վրա ազդող ուժերի սխեման բերված է նկ.2.9-ում:



Նկ.2.9. Ճուղնկով շարժվող մասնիկների վրա ազդող ուժերի հաշվարկային սխեմա:

Ճնկի արտաքին պատի նկատմամբ շարժվող մասնիկի վրա ազդող ուժերն հետևյալ ուժերն են՝ [68]

- մասնիկի ծանրության ուժը, mg ,

- մասնիկի վրա օդային հոսքի ազդեցության ուժը, $P = kF\rho \frac{U_{\text{դր}}^2}{2}$, [38], որտեղ k -ն օդի դիմադրության գործակիցն է, f -ը ընդլայնական հատույթի մակերեսը, ρ -ն օդի խտությունը, $U_{\text{դր}}$ -ը օդի կրիտիկական արագությունը,

- խողովակի պատի հակազդեցության ուժը, N ,

- խողովակի պատի և մասնիկի միջև շփման ուժը, $T = f \cdot N$, որտեղ F -ը խողովակի պատի և մասնիկի միջև շփման գործակիցն է,

- կենտրոնախույս ուժը $P_y = \frac{mc^2}{R}$, որտեղ R -ը ճուղնկի արտաքին շառավիղն է, c -ն մասնիկի արագությունը A կետում:

Մասնիկի շարժմը դիտարկենք n և τ առանցքների համակարգի նկատմամբ, ինչպես սցենարը g է տրված սխեմայում (նկ. 2.9):

Մասնիկի շարժման դիֆերենցիալ հավասարումը τ առանցքի նկատմամբ կինի.

$$\frac{dc}{dt} = P - T - mg \cos \alpha : \quad (2.42)$$

Ճիման ուժը T -ն որոշելու համար գտնենք սորմալ ուժի մեծությունը: Պրոյեկտենք մասնիկի վրա ազդող ուժերը ուղղահայաց վրա, կստանանք.

$$N = P_{\eta} - mg \sin \alpha \quad (2.43)$$

Շփման ուժը կլ ինի.

$$T = f \cdot N = f(P_{\eta} - mg \sin \alpha) \quad (2.44)$$

Տեղադրելով (2.42) հավասարման մեջ P-ի և T-ի արժեքները արտահայտող ուժերից կստանանք^a

$$m \frac{dc}{dt} = k \cdot F \cdot \rho \frac{(U-C)^2}{2} - f \left(\frac{mC^2}{R} - mg \sin \alpha \right) - mg \cos \alpha \quad (2.45)$$

Չափի առնելով, որ $U-C=U_{\eta}$ և կատարելով որոշ ձևափոխություններ (2.45) հավասարումը կընդունի հետևյալ տեսքը.

$$\frac{dc}{dt} = k \cdot F \cdot \rho \frac{U_{\eta}^2}{2m} - f \frac{c^2}{R} - g(\cos \alpha + f \sin \alpha) \quad (2.46)$$

Կատարենք փոփոխականի փոխարինում, տեղադրելով $\frac{d\alpha}{dt} = \frac{c}{R}$, ..
 $\frac{dc}{dt} = \frac{c}{R} \cdot \frac{dc}{d\alpha}$ հավասարում (2.46)–ը բերենք հետևյալ տեսքի.

$$\frac{dc}{d\alpha} = \frac{kF\rho R}{2mc} U_{\eta}^2 - f \cdot c - \frac{gR}{c} (\cos \alpha + f \sin \alpha) \quad (2.47)$$

Կատարենք նշանակում.

$$\frac{kF\rho R}{2m} U_{\eta}^2 - gR(\cos \alpha + f \sin \alpha) = a \quad (2.48)$$

Կստանանք.

$$\frac{dc}{d\alpha} = \frac{a}{c} - fc \quad (2.49)$$

Ինտեգրելով հավասարում (2.49) –ը կստանանք մասնիկի արագության c կախվածությունը α անկյունից, այսինքն՝ խողովակի կոր տեղամասի (ծունկի) ցանկացած կետում:

Կատարենք փոփոխականների անջատում կստանանք.

$$\frac{cdc}{(a-fc^2)} = d\alpha \quad (2.50)$$

Ինտեգրելով ստացված դիֆերենցիալ հավասարումը կստանանք^a

$$\alpha = -\frac{1}{2f} \ln \left(\sqrt{\frac{\alpha}{f}} - c^2 \right) + A \quad (2.51)$$

Ինտեգրման հաստատունը՝ A-ն որոշվում է սկզբնական պայմաններից, երբ $\alpha = 0, C = C_0$:

Տեղադրելով սկզբնական պայմանները (2.51) հավասարման մեջ և կատարելով ձևափոխություններ կստանանք՝

$$A = \frac{1}{2f} \ln \left(\sqrt{\frac{\alpha}{f}} - C_0^2 \right): \quad (2.52)$$

Ստացված A -ի արժեքը (2.52) հավասարումից տեղադրելով (2.51) հավասարման մեջ և կատարելով հանրահաշվական գործողությունները կստանանք մասնիկի արագության c կախվածությունը α անկյունից

$$c = \sqrt{\frac{\alpha}{f} \left(1 - \frac{1}{e^{2f\alpha}}\right) - \frac{c_0^2}{e^{2f\alpha}}} \quad (2.53)$$

Տեղադրելով α -ի արժեքը (2.47) -ից հավասարում կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$c = \sqrt{\frac{1}{f} \left[\frac{kF\rho R}{2m} U_{\text{լր}}^2 - gR(\cos \alpha + f \sin \alpha) \right] \left(1 - \frac{1}{e^{2f\alpha}}\right) - \frac{c_0^2}{e^{2f\alpha}}} \quad (2.54)$$

Ստացված արտահայտությունից հետևում է, որ ծունկում մասնիկի արագությունը կախված է առագաստայնության գործակցից k, օդի խտությունից ρ , կրիտիկական արագությունից $U_{\text{կր}}$, մասնիկի և խողովակի պատի միջև շփման գործակցից f, ծունկի անկյունից α և մասնիկի մուտքի արագությունից c_0 :

Այսպիսով (2.54) հավասարումից կարելի է որոշել մասնիկի արագությունը կախված նրա ֆիզիկամեխանիկական (f, ρ), աերոդինամիկական (k, F, $U_{\text{կր}}$), ու ծունկի կառուցվածքային պարամետրերից (R, α) և կանխել ծունկի խցանումն ու ապահովել պնևմատիկալիչի արդյունավետ աշխատանքը:

Գործնական խնդիրները լուծելիս վարվում են հետևյալ կերպ: Ընտրում են մասնիկի շարժման արագությունը, տեղադրում (2.54) հավասարման մեջ և որոշում ծունկի շառավիղը R:

Լուծենք գործնական խնդիր (2.54) բանաձևի կիրառմամբ և որոշենք ծունկի արտաքին շառավիղը մեծությունների հետևյալ արժեքների դեպքում $a = 12,5 \text{ մ/վ}$, $U_{\text{լր}} = 14 \text{ մ/վ}$, $k_{\text{պ}} = \frac{k \cdot F \cdot \rho}{m} = 0,2$, $f = 0,5$:

Տեղադրելով մեծությունների արժեքները (2.54) բանաձևում կստանանք ծունկի շառավղի մեծությունը՝ $R = 273,4 \text{ մ}$:

2.4.6. ՃՆՇՄԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆԵՐՃՈՂ ԽՈՂՎԱԿԻ ԿՈՐ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ

Մղեղային մասնիկների, խողովակի կոր տեղամասով (ծունկով), շարժման ժամանակ կորուստներն ավելի մեծ են, քան ուղիղ տեղամասում: Կոր տեղամասում, ինչպես արդեն նշվել է, հնարավոր

Է խցանում, որից խուսափելու համար մեծացնում են օդային հոսքի արագությունը, որն իր հերթին բերում է հզորության ծախսի մեծացմանը: Կոր տեղամասում հոսքի շարժումից առաջացող ճնշման կորուստները կազմված են հետևյալ բաղադրիչներից [14, 23, 26, 38].

- ծունկում օդի մրրկային շարժման դիմադրություն,
- կոշտ մասնիկների և ծունկի պատերի միջև շփման ուժերից և մասնիկների վրա ազդող իներցիոն ուժերից առաջացող դիմադրություններ:

Չետևաբար ծունկում ճնշման կորուստները կարելի է ներկայացնել երկու բաղադրիչների գումարի տեսքով՝

$$\Delta P_{\zeta} = \Delta P_{o\eta} + \Delta P_{\zeta'} \quad (2.56)$$

որտեղ՝ $\Delta P_{o\eta}$ - ը օդի շարժման դիմադրությունից առաջացող ճնշման կորուստն է, $\Delta P_{\zeta'}$ - ը կոշտ մասնիկների շարժումից՝ ճնշման կորուստը:

Կլոր հատույթով ծունկում, որը շարժման ուղղությունը փոխում է 90° -ով ճնշման կորուստները կարելի է որոշել Ա.Մ.Դոյադիոյի և Ֆ.Գ.Չունի կողմից առաջարկված հետևյալ բանաձևով [26, 38].

$$\Delta P_{\zeta} = \Delta P_{o\eta} + \Delta P_{\zeta'} = \xi_{o\eta} \frac{\rho U^2}{2} + \xi_{\zeta'} \frac{\rho U^2}{2} \quad (2.57)$$

Որտեղ՝ $\xi_{o\eta}$ -ը և $\xi_{\zeta'}$ -ն համապատասխանաբար օդի և մղեղի շարժման դիմադրության գործակիցներն են, ρ -ն՝ օդի խտությունը, U - ն՝ օդի հոսքի արագությունը: Դիմադրության գործակիցները $\xi_{o\eta}$ և $\xi_{\zeta'}$ որոշվում են փորձնական ճանապարհով:


2.4.7. ՆԵՐՇՈՂ ՃԿԱՓՈՂԻ ԿԱՌՈՒՑՎԱՆՔԱՅԻՆ ՈՒ ԿԻՆԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՉԻՄՆԱԿՈՐՈՒՄԸ

Ինչպես արդեն հայտնի է, ծղոտը տրանսպորտային միջոցին բարձելուց հետո, դաշտում մնում է մղեղային խառնուրդը մղեղային տեսքով: Մղեղային խառնուրդի թումբը ունի որոշակի երկարություն, լայնություն և բարձրություն: Այս չափերը ունեն այս կամ այն աստիճանի փոփոխականության հատկություն,

որը պետք է հաշվի առնվի պլանմափոխակրիչի ներծծող խողովակի և նրան ամրացված ծայրափողակի կինեմատիկական պարամետրերի՝ տատանման անկյան α և շուռտվիկի շառավղի r չափերի որոշման և մեքենայի նախագծման ժամանակ:

Երբ պլանմափոխակրիչներում որպես ընդունիչ կիրառում են ծայրափողակ, ապա ներծծող խողովակը պետք է լինի ճկուն և հնարավորություներ տրվի ծայրափողակին տարածության մեջ այնպես տեղադրվել, որպեսզի մղեղաթմբի ցանկացած կետից վերցնի մղեղային խառնուրդի ամբողջ զանգվածը^a չխախտելով համակարգի հերմետիկությունը:

Ներծծող խողովակի ճոճման անկյան α և շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի շուռտվիկի շառավղի r ու անկյունային արագության մեծության որոշման հաշվարկային սխեման բերված է նկ.2.10-ում:



Նկ.2.10. Ներծծող ճկափողղի ճոճման անկյան α , շուռտվիկի շառավղի r ու անկյունային արագության ω որոշման հաշվարկային սխեմա:

Նշանակենք մղեղային խառնուրդի թմբի լայնությունը b , բարձրությունը h : Այս չափերը ունեն այս կամ այն աստիճանի փոփոխականության հատկություն և դրանց իրական մեծություններն ու փոփոխման սահմանները որոշվում են փորձնական եղանակով:

Ինչպես հետևում է հաշվարկային սխեմայի AOB եռանկյունուց (նկ.2.10) շուռտվիկի շառավղի r կարելի է որոշել հետևյալ արտահայտությամբ՝

$$r = \frac{b \cdot H_1}{2H}, \quad (2.58)$$

որտեղ՝ b -ն մղեղաթմբի լայնությունն է, H - ը և H_1 - ը համապատասխանաբար ճկափողի և ճկափողին շարժաթևի միացման կետի բարձրությունները:

Պնևմատիկակրիչի փորձանմուշի նախագծման և պատրաստման փորձը ցույց է տվել, որ ներծծման ճկափողը և շուռտվիկաշարժաթևային մեխանիզմը ստացվում են օպտիմալ չափերով, եթե $\frac{H_1}{H} = 0,2 \dots 0,3$:

Տեղադրելով $H_1 = k \cdot H$ (2.58) արտահայտության մեջ, կարելի է որոշել շուռտվիկի շառավիղը հետևյալ բանաձևով.

$$r = \frac{1}{2} k \cdot b: \quad (2.59)$$

Չափարկային սխեմայից հետևում է, որ ճկափողի ճոճման անկյունը՝ α -ն կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$\alpha = \arctg \frac{r}{kH}, \quad (2.60)$$

Ծայրափողակը ճկափողի հետ մասին կատարում է բարդ շարժում: Այն բաղկացած է հարաբերական և տեղափոխական շարժումներից:

Չարաբերական շարժումը կատարվում է ագրեգատի ընթացքին ուղղահայաց ուղղությամբ հետևյալ հավասարումով [49, 85, 90].

$$x = r(1 - \cos \omega t), \quad (2.61)$$

Որտեղ՝ x - ը ծայրափողակի տեղաշարժն է, ω - ն շուռտվիկի պտտման անկյունային արագությունը:

Ծայրափողակի և ճկափողի տեղափոխական շարժումը կատարվում է $V_{տ}$ արագությամբ շարժվող ագրեգատի հետ և որոշվում է հետևյալ հավասարումով.

$$y = V_{տ} \cdot t, \quad (2.62)$$

Ագրեգատի անցած ճանապարհը շուռտվիկի մեկ լրիվ պտույտի ժամանակ անվանում են ծայրափողակի մատուցում և որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$h = V_{տ} \cdot T = V_{տ} \frac{2\pi}{\omega}, \quad (2.63)$$

որտեղ՝ T -ն շուռտվիկի մեկ պտույտի ժամանակն է:

Չավասարումից (2.63) կարելի է, որոշել շուռտվիկի պտտման անկյունային արագությունը.

$$\omega = \frac{2\pi \cdot V_{uf}}{h} \quad (2.64)$$

Դաշտային փորձերով հիմնավորվել է, որպեսզի մղեղի ներծծումը մղեղաթմբից կատարվի ամբողջությամբ անհրաժեշտ է, որ մատուցումը հ հավասար լինի


$$h = (0,25 \dots 0,3)\ell:$$

որտեղ՝ ℓ - ը ծայրափողակի ճեղքի լայնությունն է (նկ.2.10):

Ընդունելով $h = 0,25\ell$ և տեղադրելով հավասարման (2.63) մեջ կստանանք՝

$$\omega = \frac{8\pi \cdot V_{uf}}{\ell} \quad \text{կամ} \quad n = \frac{240V_{uf}}{\ell}, \quad (2.65)$$

որտեղ՝ n - ը շուռտվիկի պտուտաթվերն են:



Նկ.2.11. Ծայրափողակի շարժման դիագրամ:

Այսպիսով հաստատվեց անալիտիկ կապ պլևմափոխակրիչի ծայրափողակի կառուցվածքային պարամետրի ℓ , շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի կինեմատիկական պարամետրերի r , ω , n և ագրեգատի շարժման V_{uf} արագության միջև: Ստացված արտահայտությունների հիման վրա կառուցվել է ծայրափողակի շարժման դիագրաման (նկ.2.11): Դիագրամայի վրա կրկնակի նրբագծված մակերևույթը ցույց է տալիս, որ

ծայրափողակը նույն տեղով անցնում է կրկնակի, որով ապահովվում է մղեղի լրիվ ներծծումը մղեղաթմբից:

2.5. ՄՂԵՂԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐՂՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ՊԼԵՎՄԱՓՈՒԱԿՐԻՉԱՅԻՆ ԱԳՐԵԳԱՏԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԱՌԵԼԻՔԻ ԾԱԽԱԸ

Մղեղային խառնուրդների հավաքման պնևմափոխակրիչային ագրեգատի ժամային արտադրողականությունը կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝

$$W_{\sigma} = 0,1 \cdot \ell_{\sigma} \cdot V_p \quad (2.66)$$

Որտեղ՝ ℓ_{σ} -ը մղեղաթմբերի միջին հեռավորությունն է, մ, V_p – ն՝ ագրեգատի աշխատանքային արագությունը, կմ/ժ:


Գործնականում, ավելի կիրառելի է, ագրեգատի արտադրողականությունը հաշվարկել հեկտարային արտահայտությամբ, այսինքն՝ մեկ ժամում հավաքած հեկտարների քանակով:

Նախ որոշենք մղեղաթմբերի բաշխվածությունը դաշտում, ապա հաշվարկենք մղեղաթմբերի երկարությունը 1 հա-ի վրա:

Ծղոտը հավաքելուց հետո դաշտում մնում է մղեղային խառնուրդը մղեղաթմբերի տեսքով:

Մղեղային թմբերի բաշխվածությունը դաշտում ու մղեղահավաք ագրեգատի շարժման ուղղությունները դաշտում պատկերված են սխեմայում, նկ.2.12: Մղեղաթմբերի միջև հեռավորությունը ℓ_{σ} -ը կախված է հացահատիկի բերքատվությունից, ծղոտակուտակիչի բեռնատարողությունից m , կոմբայնի ընդգրկման լայնությունից B_y , ծղոտի ու հացահատիկի զանգվածների հարաբերությունից β և կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$\ell_{\sigma} = \frac{10^5 \cdot m}{B_y \cdot q \cdot \beta}, \text{ մ} : \quad (2.67)$$



Նկ. 2.12. Մղեղաթմբերի բաշխվածությունը ու նրա կոմբայնի ու մղեղահավաք ագրեգատի շարժման ուղղությունը նենդի սխեման

Եթե 1 հա մակերեսով դաշտի լայնությունը B է, իսկ երկարությունը՝ L , ապա մղեղաթմբերի երկարությունը կլինի.

$$L_{մղ} = B \cdot \frac{L}{\ell_{մղ}} \quad (2.68)$$

Մղեղահավաք ագրեգատի ժամային արտադրողականությունը կլինի.

$$W_d = \frac{Q \cdot \rho}{\frac{L_{մղ} + L}{V_p} + \frac{L}{V_{տպ}}} \text{ հա/ժամ} \quad (2.69)$$

Որտեղ՝ $V_{տպ}$ -ն և V_p -ն համապատասխանաբար բեռնված և բեռնաթափված ագրեգատի դեպի ֆերմա և ֆերմայից դաշտ շարժման արագություններն են կմ/ժ, L -ը ֆերայի և դաշտի միջև հեռավորությունը, կմ:

Ագրեգատի բանվորական արագությունը ընտրվում է տրակտորի ընթացքի դանդաղեցուցիչով արագությունը, որի մեծությունը գտնվում է հետևյալ սահմաններում՝ $V_p = 0,6 \dots 0,68$ կմ/ժ:

Վառելի անյութի ծախսը 1 հավրակլինի.

$$q_{hw} = \frac{G_p \cdot T_p + G_{տպ} \cdot T_{տպ} + G_{տպ} \cdot T_{տպ}}{W_d}, \text{ կգ/հա} \quad (2.70)$$

Որտեղ՝ G_p , $G_{տր}$, $G_{տայ}$ -ն վառելիքի ժամային ծախսն է համապատասխանաբար ագրեգատի բանվորական, տրանսպորտային ընթացքի ժամանակ և կանգառներում:

Ագրեգատի բանվորական և պարապ ընթացքի ժամանակները որոշվում են համապատասխանաբար.

$$T_p = \frac{L_{տր}}{V_p}, \text{ \AA}^3\text{Ս}, T_{տր} = \frac{L}{V_{տր}} \dots T_{տայ} = \frac{L}{V_{տայ}} \text{ ժամ:} \quad (2.71)$$

ԵՃՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆՆԵՐ

Տեսական հետազոտությունների հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Վերլուծելով գոյություն ունեցող ծղոտահավաք մեքենաների կառուցվածքը, առաջարկվել է մղեղային խառնուրդների հավաքման և տրանսպորտային միջոցին բարձր պարզ կառուցվածքի, հոսալի, ոչ մետաղատար պլաստիկից, որի համար ստացվել է գյուտի արտոնագիր (N 2986A):
2. Պլաստիկից ներծծող, տատանվող ճկախողովակում մղեղի մասնիկների շարժման տեխնոլոգիական գործընթացի հետազոտման համար մշակվել է կոշտ հատիկի շարժման մաթեմատիկական մոդել և կազմվել են հատիկի շարժման դիֆերենցիալ հավասարումները ճկախողովակի ուղիղ և կոր տեղամասերի համար:
3. Ծայրափողակում մղեղային խառնուրդի շարժման վերլուծության հիման վրա ստացվել են բանաձևեր (2.15), (2.21), որոնցով կարելի է հաշվել մասնիկի ծայրափողակ ներծծման օպտիմալ արագությունը և ճնշման կորուստները, որոնց մեծությունը ուղիղ համեմատական է խառնուրդի կոնցենտրացիայի գործակցին μ , օդի U և մղեղային խառնուրդների C արագություններին:
4. Տատանվող ճկախողովակի ուղիղ տեղամասում մղեղային մասնիկների շարժման տեսական վերլուծության արդյունքում ստացվել է (2.30) բանաձևը, որը կապ է հաստատում խողովակում օդի կրիտիկական արագության $U_{կր}$

, մասնիկների Φ ի գիկամեխանիկական (ρ, f, F) և շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի կինեմատիկական պարամետրերի (ω, r) միջև հնարավորություն է տալիս ճիշտ ընտրել օդի օպտիմալ արագությունը: Ստացվել է (2.41) բանաձևը^a ճկախողովակի ուղիղ տեղամասում ճնշման կորուստները հաշվարկելու համար:

5. Վերլուծելով մղեղային խառնուրդի բազմաբաղադրիչ հոսքի շարժումը խողովակի կոր տեղամասով, բացահայտվել է հոսքի շարժման օրինաչափությունը: Ծանր մասնիկները շարժվում են դեպի ծունկի արտաքին պատ, շփման ուժերի հետևանքով կորցնում արագությունը, թափվում ցած և հաճախ առաջացնում խցանում: Ստացվել է (2.55) բանաձևը, որը կապ է հաստատում ծունկի շառավղի R և մասնիկների Φ ի գիկամեխանիկական պարամետրերի (ρ, f, F) ու աերոդինամիկական $U_{կր}$ պարամետրերի միջև: Բանաձևը հնարավորություն է տալիս որոշել ծունկի երկրաչափական պարամետրերը R և α և բացառել խցանումները: Տեսական հետազոտություններով կապ է հաստատվել շուռտվիկաշարժաթևային մեխանիզմի կինեմատիկական պարամետրերի (ω, r) ծայրափողակի լայնության՝ ℓ , մղեղաթմբի լայնության b և ագրեգատի շարժման $V_{ս}$ արագության միջև և ստացվել շուռտվիկի շառավղի ու պտուտաթվի որոշման գործնական կիրառության համար (2.58) և (2.65) բանաձևերը, որի ժամանակ ապահովվում է մղեղի լրիվ ներծծումը մղեղաթմբից:

6. Տեսական հետազոտություններով ստացվել է մղեղաթմբերի միջև հեռավորությունը որոշող բանաձև (2.67) և մղեղահավաք ագրեգատի ժամային արտադրողականությունը հաշվարկելու (2.66) և (2.69) բանաձևերը, որոնք ունեն գործնական նշանակություն:

3.ԳԻՏԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ԿՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

3.1. ԳԻՏԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Մղեղի հավաքման և տրանսպորտային միջոցին բարձրանալու և մախոխակրիչի աշխատանքային գործընթացի գիտափորձնական հետազոտությունների նպատակն է հիմնավորել տեսական հետազոտությունների արդյունքների հավաստիությունը, ճշտել որոշ տեսական հետազոտությունների վերջնական արդյունքները, փորձնական ճանապարհով որոշել այնպիսի պարամետրերի օպտիմալ մեծությունները ինչպիսիք են.

- Մղեղային խառնուրդների բաղադրությունը, չափական կազմը և տոկոսային ելքը հացահատիկի բերքատվությունից կախված,
- Մղեղաթմբի երկրաչափական պարամետրերը,
- Մղեղային խառնուրդների ֆիզիկամեխանիկական և աերոդինամիկական հատկությունները խոնավությունից կախված,
- Օդային հոսքի ճնշման կորուստները ներծծող խողովակի ծայրափողակում, ուղիղ և կոր տեղամասերում:

Նշված գիտափորձերը հնարավորություն կտան բացահայտել ու մղեղային խառնուրդների պնևմախոխակրիչի տեխնոլոգիական գործընթացը, լավարկել ու նրա աշխատանքային օրգանների կառուցվածքային ու տեխնոլոգիական պարամետրերը, ընտրել աշխատանքի այնպիսի ռեժիմներ, որոնք հնարավորություն կտան բարձրացնել ու մեքենայի հոսալիությունն ու արդյունավետությունը:

Գիտափորձերով հաստատել միջարք օրինաչափություններ, որոնք հնարավորություն կտան մղեղային խառնուրդի ֆիզիկամեխանիկական և աերոդինամիկական հատկություններից կախված, հիմնավորել մղեղի հավաքման պնևմախոխակրիչի աշխատանքային օրգանների կառուցվածքային ու կինեմատիկական պարամետրերը և շահագործական ցուցանիշները:

Գիտափորձերը նախապատրաստվել և անց են կացվել էքսպերիմենտների պլանավորման և արդյունքների մաթեմատիկական մշակման ընդունված մեթոդների հիման վրա [4, 9, 13, 22, 28, 30 և այլն]:

3.2. ԳԻՏԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒ ԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Գիտափորձնական հետազոտությունների ծրագրում ընդգրկվել են՝

- ✓ գիտափորձնական հետազոտությունների մեթոդիկայի մշակումը,
- ✓ հացահատիկի բերքատվությունից կախված մղեղի ելքի որոշումը,
- ✓ մղեղի բաղադրության և բաղադրիչների տոկոսային պարունակության որոշումը,
- ✓ մղեղային խառնուրդի ֆիզիկամեխանիկական և աերոդինամիկական հատկությունների որոշումը,
- ✓ օդի հոսքի ճնշման կորուստների որոշումը ծայրափողակում, ներծծող խողովակի ուղիղ և կոր տեղամասերում,
- ✓ պնևմափոխակրիչի փորձնական նմուշի կառուցվածքի մշակումը և պատրաստումը,
- ✓ պնևմափոխակրիչի արտադրական փորձարկումների անցկացումը, փորձարկումների արդյունքների մշակումը, տեսական հետազոտությունների արդյունքների հավաստիության գնահատում, մեքենայի տեխնիկաշահագործական պարամետրերի ու շահագործական ռեժիմների հիմնավորումը:


3.3. ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

Հետազոտության օբյեկտներ հանդիսացել են՝ մղեղային խառնուրդները, պնևմափոխակրիչի լաբորատոր և արտադրական նմուշները:

Ընտրվել են գիտափորձերի կատարման համար անհարժեշտ չափիչ սարքեր և սարքավորումներ Պիտո-Պրանդտլի օդաճնշաչափական խողովակների հավաքածու էլեկտրոնային խոնավաչափ “Wilco 25”, կշեռք էլեկտրոնային (ձեռքի), պտուտաթվերի չափիչ (տախտմետր), շփման գործակցի մեծության որոշման սարք՝ տրիբոմետր:

3.3.1. ՄՂԵՂԱՏԻՎԱԲ ԱՆԼՄԱՓՈԽԱԿՐԻՋԻ Լ ԱՔՈՐԱՏՈՐ ՍԱՐՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մղեղատիվաբանական մափոխակրիչի կառուցվածքային տարրերի ու հիմնական պարամետրերի ընտրության ճշգրտման ու տեսական դրույթների ստուգման, բազմակողմանի գիտափորձնական հետազոտություններ կատարելու համար մեր կողմից նախագծվել և պատրաստվել է Լ արորատոր սարքավորում (Նկ.3.1):



ա

բ

Նկ. 3.1 Մղեղատիվաբանական մափոխակրիչի Լ արորատոր սարքավորում.

ա- սխեման, բ- Լ ու սանկարը,

1 – Օդամղիչ, 2- ծայրապանակ, 3 - ներծծող ճկախողովակ, 4 - ծուկ, 5- մղման խողովակ, 6- էլեկտրաչափիչ, 7- մղեղատիվաբանական պարկ, 8- շրջանակ, 9 - փոկային փոխանցում, 10- Պիտո-Պրանդտլի օդաճնշաչափական խողովակների հավաքածու :

Պնևմատիկ խակրիչի Լ աբորատոր տարբերակը հնարավորություն է տալիս՝

Ներծծման ճկախողովակում ստանալ տարբեր մեծության նոսրացում և դրանց համապատասխան օդի արագությունը,

Որոշել օդի հոսքի ճնշման կորուստները ծայրապանակում, ճկախողովակի ուղիղ և կոր (ծունկ) տեղամասերում օդի արագությունից, կոնցենտրացիայի գործակցից ու մղեղային խառնուրդի խտությունից կախված:

Որոշել պնևմատիկ խակրիչի արտադրողականության, կախվածությունը կոնցենտրացիայի գործակցից μ և մղեղի խոնավությունից:

